

Համարի հարցը. «Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամ» ինչո՞ւ չի պահանջում պետական միջոց հանդիսացող մոտ 300 մլն դրամը, որ 2016-ին պարտքով տրվել է «Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» մասնավոր բարեգործական հիմնադրամին:

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԲՈՎԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1100, գինը՝ 100 դրամ:

ISSN 1829-3468
20001
771829 346006

Սյունյաց երկիր

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 16 ՀՈՒՆՎԱՐԻ 2020Թ.
№ 1 (517)

www.syuniacyerkir.am

Թախծում է գունդը հրեշտակների, Սափանան՝ պարում լիրբ հռչոցով...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ
«Մարյան ողբերգության», ԲԱՆ Դ, Ա

Սյունիքում շարունակվում է ձմեռային զորակոչը



2 մանրի եւ Սուրբ ծննդի տոներից հետո կյանքն աստիճանաբար բնականոն հուն է ընկնում:
Մարզկենտրոնում հունվարի 14-ին զինակոչիկների երկրորդ խումբը մեկնեց հանրապետական հավաքակայան:
Կապանի զինկոմիսարիատի առջեւ պուրակում հավաքվել էին ապագա զինվորների ծնողներն ու հարազատները, հարեաններն ու

մտերիմները:
Օրվա խորհրդին նվիրված հանրահավաքին մասնակցում էին մարզային եւ համայնքային իշխանությունների, իրավապահ կառույցների ներկայացուցիչներ, Արցախյան ազատամարտի մասնակիցներ:
Բացման խոսքում Սյունիքի զինկոմ, գնդապետ Արարատ Մանուչարյանը մասնավորապես նշեց. «Նման միջոցառումներ 1992-1994

թվականին չէին անցկացնում, որովհետեւ հակառակորդի կողմից հրետակոծվում էր մեր քաղաքը: Ձեր հայրերի, պապերի կողմից թշնամին թշվեց մեր սահմաններից, որ սյունեցին ապրի խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով, երեխաներն անհոգ մանկություն անցկացնեն:

Էջ 3

Վարչապետի հաջորդ ասուլիսը տեղի կունենա Կապանում



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն իր ֆեյսբուքյան էջում գրել է:
«Չանգեզուրի լրատվամիջոցների հարգելի ներկայացուցիչներ, տեղեկացնում եմ, որ իմ հերթական ասուլիսը տեղի կունենա հունվարի 25-ին, ժամը 11.00-ին՝ Սյունիքի մարզկենտրոն Կապանում, «S'UNIQUE» կինոթատրոնի շենքում (հասցե՝ Շահումյան 1):
Ասուլիսին մասնակցելու համար ՁԼՄ-ների ներկայացուցիչները կարող են հավատարմագրվել ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունում:»

Մեղրեցիները տեղի հիվանդանոցում ստեղծված վիճակի վրա են հրավիրում իշխանությունների ուշադրությունը

1 Երջին մոտ տասը տարում աշխատել եմ Մեղրու բժշկական կենտրոնում՝ շտապ օգնության մեքենայի վարորդ:
2019 թ. մայիսին ինձ ազատել են աշխատանքից:
Պատճառը հետեւյալն էր. մենք՝ երկուսով, աշխատում էինք շտապ օգնության երկու հին ավտոմեքենայի վրա (20 տարվա մեքենաներ էին):
Հիվանդանոցը երկու նոր մեքենա ստացավ եւ մեզ՝ նախկին վարորդներին, չտվեցին:
Նոր մեքենաների վարորդներ նշանակվեցին դրսի՝ հիվանդանոցի հետ կապ չունեցող մարդիկ:
Եվ մենք դժգոհություն հայտնեցինք, տնօրեն Լուսինե Վարդանյանն էլ ինձ, առանց դիմումի, առանց ինձ հետ խորհրդակցելու ազատեց աշխատանքից:
Հիմա ուրիշ տեղ եմ աշխատում:
Ինչո՞ւ եմ յոթ ամիս լռելուց հետո բարձրաձայնում իմ ոտնահարված իրավունքների մա-



սին:
Թող չափազանցություն չլինի, բայց իմ համեստ ներդրումն ունեմ Մեղրու հիվանդանոցի կայացման գործում:
Եվ ցավ եմ ապրում այնտեղ ստեղծված խայտառակ վիճակի համար:
Հիվանդանոցը չի ջեռուցվում:
Հիվանդներն այնտեղ կամ վերարկուով են, կամ տնից ջեռուցիչներ են բերում:

2019 թ. Ազարակի կոմբինատը հիվանդանոցին 20 տոննա սայարկա է հատկացրել՝ «կատելին» աշխատեցնելու եւ հիվանդանոցը ջեռուցելու համար, բայց թե ինչ են արել այդ վառելիքը՝ ոչ ոք չգիտի:
1916 թվականից տնօրենի ծառայողական «Նիվա» մակնիշի մեքենան չի աշխատում, բայց ուղեգրեր է գրվել, վառելիք դուրս գրվել:
Շտապ օգնության կեղծ կանչեր են գրվում եւ վառելիք դուրս գրվում:
Դիակները տեղափոխվում են շտապ օգնության մեքենայով, որը չի կարելի, բայց դրա դիմաց հերձողից 20 հազար գումար են վերցնում, այնպես որ՝ դիակից էլ են փող աշխատում:
Այս ամենի վրա եմ հրավիրում իշխանությունների ուշադրությունը՝ հույս ունենալով, որ տնօրենին, գոնե ուշացումով, խելքի կբերեն եւ հիվանդանոցում կհաստատեն կարգ ու կանոն:

ԼՅՈՎԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Սյունիքի մարզպետարանում կան մարդիկ, ովքեր խոչընդոտում են փոփոխությունների իրականացմանը



«Հայկական ժամանակի» այդ հարցին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանն այսպես է պատասխանել. «Ձեռք հանրորժի նմաններին, բայց կտրուկ ասել, որ չկան, սխալ կլինի, որովհետեւ ունենք այնպիսի աշխատակիցներ, ովքեր սպասվող օպտիմալացման հետ կապված, կոպիտ ասած, «պաուզա» են վերցրել, բայց դա լուծվող հարց է, օպտիմալացման արդյունքում նմաններից կազատվենք եւ վերջ»:
«ՀԱՅՎԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»
11 հունվարի 2020 թ.

Գեւորգ Փարսյան. «2019-ը կգնահատեն որպես ձեռքբերումների փարի եւ վարահորեն կասեմ, որ մեր առջեւ դրված խնդիրները լիովին կարարել ենք»

«Դե Ֆակտո» ամսագրի գրուցակիցն է Կապան խոշորացված համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանը

- Պարոն Փարսյան, «Դե Ֆակտո» ամսագրի խմբագրակազմը, բարձր գնահատելով Ձեր մեկ տարվա արդյունավետ գործունեությունը, իրականացված ծրագրերը, Կապանի զարգացման միտումները, Ձեզ ճանաչել է «Տարվա համայնքի ղեկավար 2019»-ը: Եթե փորձեք ամփոփել տարին, ապա ինչպե՞ս այն կգնահատեք, արդյո՞ք հասցրեցիք անել այն ամենը, ինչ ծրագրել էիք:

- Նախ շնորհակալություն եմ հայտնում իմ կատարած աշխատանքը գնահատելու եւ ինձ 2019 թվականի համայնքապետ ճանաչելու համար: Այս մեկ տարվա ընթացքում փորձել ենք հնարավորինս խթանել համայնքի առավել զարգացած ոլորտները, եւ նախանշել ու զարգացման հիմքեր ստեղծել այն ոլորտների համար, որտեղ առաջընթաց չէր նկատվում: Ընդհանուր առմամբ, տարին կգնահատեմ որպես ձեռքբերումների տարի եւ վստահորեն կասեմ, որ մեր առջեւ դրված խնդիրները լիովին կատարել ենք: Իհարկե, շատ ուղղություններով դեռ աշխատանք կա անելու, բայց հիմնական միջոցառումներն ու ծրագրերը, որոնք նախանշել էինք այս տարվա համար, կատարել ենք:

- Ինչ խնդիրներ ունեւ Կապանը, երբ ստանձնեցիք համայնքապետի պաշտոնը, եւ այսօր դրանցից որոնք են լուծում ստացել:

- Կապան համայնքն ուներ բազմաթիվ եւ բավական լուրջ խնդիրներ՝ կապված բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների եւ վերելակների վերանորոգման, աղբահանության արդյունավետ կազմակերպման, բակային տարածքների եւ ներհամայնքային փողոցների ասֆալտապատման, քաղաքի արտաքին տեսքի բարեկարգման, քաղաքը համայնքի գյուղերի հետ կապող ճանապարհների շինարարության հետ եւ այլն: Ընտրվելով Կապան համայնքի ղեկավար՝ իմ առջեւ նպատակ դրեցի շուտափույթ լուծել կապանցիների բարեկեցությանն ու համայնքի զարգացմանն ուղղված առաջնահերթ խնդիրները:

Այս մեկ տարվա ընթացքում կարողացել ենք վերանորոգել թվով 55 եւ 43 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքները (մի մասը դեռ ընթացքի մեջ է) եւ վերելակները (ՀՀ կառավարության հետ համատեղ), բարեկարգվել են կենտրոնական փողոցների որոշ մայրեր, վերակառուցվել եւ նորոգվել են 12 մայրուղուն կից թվով 10 կանգառները, մասնակի վերանորոգվել եւ գույքով են ապահովվել մանկապարտեզները, մարզադպրոցները, երաժշտական դպրոցները եւ այլն: Հսկայական աշխատանք է իրականացվել քաղաքի աղբահանության եւ արտաքին լուսավորության ոլորտում, բարեկարգվել է Աղվանի գյուղ տանող 20կմ ճանապարհահատվածը, ներկա դրությամբ ընթացքի մեջ են գտնվում Կաղնուտ գյուղական բնակավայր տանող ճանապարհի շինա-

րարական աշխատանքները: Իրականացված աշխատանքները բազմաթիվ են, եւ կարծում եմ՝ արդյունքը տեսանելի է:

- Իրականացված ծրագրերից որոնք են կիսատ մնացել, որ պետք է շարունակվեն 2020-ին:

- Կիսատ մնացած աշխատանքներից, երեւի թե, նշեմ բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգումը, որը շարունակական բնույթ կկրի նաեւ 2020 թվականին, եւ 55-ին կգումարվի եւս 30-ը:

- Որքանով տեղյակ ենք, կոմունալ տնտեսությունը գինվել է նոր տեխնիկայով, կներկայացնե՞ք ինչ աշխատանքներ են կատարվել այդ ուղղությամբ:

- Մենք այս ոլորտում ի սկզբանե ունեցել ենք հստակ նպատակներ՝ ունենալ այնպիսի կառույց, որը կհամակարգի կոմունալ տնտեսության ոլորտի գործառնությունը՝ աղբահանությունից մինչեւ կանաչապատում, սանմաքրման աշխատանքների կազմակերպումից մինչեւ լուսավորության ցանցի գործարկում: Այսօր վստահորեն կարող ենք ասել, որ մեր նպատակներն արդարացվել են: Նշեմ այդ ուղղությամբ իրականացված աշխատանքներից մի քանիսը:

Գրանցվել է աղբահանության վճարի հավաքման մոտ 40% ած, ծառայության աշխատակիցների աշխատավարձերի շուրջ 30%-ի ավելացում, շուրջ 100 աղբակետի կառուցում, 80-ից ավելի ժամանակակից աղբարկղերի եւ 7 տեխնիկայի ձեռքբերում:

Փոխվել է քաղաքի լուսավորության համակարգը՝ 950 լուսատուների փոխարեն տեղադրվել են 1600 LED էներգախնայող լուսատուներ, քաղաքի 27 էլեկտրական ենթակայաններում նույնպես ամբողջությամբ փոխվել են հին էլեկտրական սարքավորումները եւ տեղադրվել նոր, թվային, ժամային ռելեներ, ինչպես նաեւ ավտոմատ միացման-անջատման սարքեր, որոնց շնորհիվ քաղաքի ամբողջ տարածքում փողոցային լուսավորության տեղությունը մինչեւ լուսաբաց է: Համայնքը նաեւ ակտիվորեն մասնակցել է եւ համապետական, եւ՝ համայնքային շաբաթօրյակներին, որի ընթացքում տնկվել է մոտ 1000 ծառ:

- Արդյո՞ք ներդրումներ եղել են համայնքում 2019թ. ընթացքում եւ ի՞նչ քայլեր եք ձեռնարկում համայնք ներդրումներ ներգրավելու ուղղությամբ:

- Իհարկե, 2019 թվականի ընթացքում համայնքում բազմաթիվ ներդրումներ եղել են թե՛ պետությունից, թե՛ միջազգային, եւ թե՛ տեղական ներդրումների կողմից: Մասնավորապես, 2019 թվականին համայնքի համար զգալի ներդրումներ են կատարել տարածաշրջանում գործող հանքարդյունաբերական երկու ձեռնարկությունը, միջազգային դոնոր կազմակերպություններից հատկանշական են «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը,



Եվրամիությունը, «Մարդը կարիքի մեջ» բարեգործական կազմակերպությունը, «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան»-ը եւ այլն:

- Ինչ աշխատանքներ են իրականացվել տարվա ընթացքում ուղղված կրթության, մշակույթի եւ սպորտի ոլորտներին (դպրոցների, մանկապարտեզների, մշակութային, սպորտային օջախների վերանորոգման, վերազինման աշխատանքներ եւ այլն), եւ ի՞նչ հաջողություններ են արձանագրվել դրանցում:

- Համայնքապետարանի ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվում համայնքի ենթակառուցվածքային տակ գտնվող կառույցները, եւ այս ուղղությամբ կատարվել են մի շարք ներդրումներ եւ աշխատանքներ. արժեքի կայի դպրոցի, մանկապատանեկան մարզադպրոցի, մարմնամարզության մարզադպրոցի եւ թվով 13 ՆՈՒՀ-երի համար գույքի ձեռք բերում եւ վերանորոգման աշխատանքներ: Ինչ վերաբերում է կրթության եւ մշակույթի բնագավառին, ապա երիտասարդության ինտելեկտուալ զարգացման նպատակով կատարվել են գրադարանների նորոգում, գրադարանային ֆոնդի թարմացում, տեխնիկական վերազինում եւ այլն: Տեխնիկապետ վերազինվել է նաեւ Կապանի մշակույթի կենտրոնը, որի վերակառուցման աշխատանքները դեռեւս ընթացքի մեջ են գտնվում: Աջակցել ենք սպորտի, մշակույթի եւ կրթության բնագավառներում հաջողությունների հասած պատանիներին՝ կատարելագործվելու եւ միջազգային միջոցառումներին մասնակցելու նպատակով: Ինչպես նաեւ ստեղծել ենք «Սյունիք» ժողովրդական անսամբլը՝ համայնքում ազգային եւ

ժողովրդական պարային անսամբլ ունենալու համար:

- Կապանը ճանաչվել է նաեւ «Մշակութային լավագույն համայնք 2019» ավանդական «Լավագույն համայնք» մրցանակաբաշխության ժամանակ, որը կազմակերպվում է Հայաստանի համայնքների միության ու ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության նախաձեռնությամբ: Ըստ Ձեզ՝ որն էր Կապանի հաջողության գրավականն այս մրցանակաբաշխության ժամանակ, մշակութային ի՞նչ ծրագրեր էին ներկայացված Ձեր հայտում:

- «Մշակութային լավագույն համայնք 2019» ճանաչվելը համարում եմ տարվա մեր ամենամեծ հաջողություններից մեկը: Կապանի հաջողության գրավականներից մեկն այս մրցանակաբաշխությունում այն էր, որ տարվա ընթացքում մշակութային միջոցառումներ են իրականացվել ոչ միայն Կապան քաղաքում, այլ նաեւ համայնքի գյուղական բնակավայրերում: Բացի այն, որ մշակույթի կենտրոնին է վստահված բոլոր տոն օրերին համաքաղաքային միջոցառումների անցկացումը. այս տարի կենտրոնը հանդես եկավ նաեւ բացառիկ նախաձեռնությամբ՝ «Զեզ համար, Կապան» բարեգործական ծրագրով, «Իմ սրտում Ազնավոր» եւ «Իմ հոգում Կոմիտաս» համերգներ կայացրանք, որի հասույթն ավելի, քան 15 մլն դրամ էր: Մշակութային լավագույն համայնք անվանակարգում հաղթող հռչակվելուն նպաստել են նաեւ համայնքում գործող երաժշտական եւ արվեստի դպրոցները, պետատրոնը, թանգարանները, երիտասարդական կազմակերպությունները եւ մշակութային կյանքով ապրող մշակութա-

սեր հասարակությունը:
- 2019թ. ձեռքբերումներով լի էր հատկապես Կապան քաղաքի համար. Կապան քաղաքը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից ճանաչվեց «Երիտասարդական մայրաքաղաք 2020», ինչի առթիվ շնորհավորում ենք Ձեզ: Նախ՝ ինչպե՞ս որոշեցիք դառնալ մրցույթի հայտատու եւ ըստ Ձեզ՝ որն էր Կապանի հաղթաթուղթը. չէ՞ որ մրցույթին մասնակցում էին նաեւ Արմավիր, Հրազդան, Գավառ, Գորիս քաղաքները, որոնք եւս բավականին զարգացած են:

- Նախ շնորհակալ եմ շնորհավորանքի համար, նշեմ, որ Կապանն արդեն երրորդ տարին է դիմում մրցույթին մասնակցելու համար, եւ քանի որ նախորդ տարի փորձագետների կողմից ստացել էինք առավելագույն միավորներ եւ պարտություն կրել միայն sms հաղորդագրությունների արդյունքում, այս տարի հաղթանակը, կարծես թե, նպատակ էր դարձել: Կարծում եմ՝ այս մրցույթում Կապանն իսկապես արժանի մրցակից էր, քանի որ ուներ եւ՝ ակտիվ ու գործունե երիտասարդություն, եւ երիտասարդական կազմակերպություններ, եւ՝ այն բոլոր ռեսուրսները, ինչն անհրաժեշտ էր մրցույթում հաղթող ճանաչվելու համար:

- Հետագրքի է, ինչպիսին է Կապանի երիտասարդությունը, ինչպիսի մտածողությամբ եւ արժեքներով է առաջնորդվում:

- Կապանի երիտասարդներն ակտիվ, մտածող, նախաձեռնող, իրենց առողջ նպատակների մեջ հաստատական, պատասխանատու են եւ առաջնորդվում են հարազատ քաղաքի նկատմամբ անմտացող սիրով ու նվիրումով եւ միշտ առավելագույնին հասնելու ձգտումով:

- Երիտասարդական ինչպիսի քաղաքականություն է վարվում Ձեր կողմից եւ ի՞նչ ծրագրեր են իրականացվելու 2020-ին:

- Ես, որպես համայնքի ղեկավար, երիտասարդներին մեծ տեղ եմ տալիս: Նրանց ձայնը պետք է լսել լինի, նրանց տեսակետները պետք է գնահատվեն եւ հաշվի առնվեն, որպեսզի երիտասարդները համարվեն որոշումների կայացման գործընթացի մաս: Նրանց պետք է ներառվորություն տալ ակտիվորեն մասնակցել համայնքային կյանքին եւ զարգանալ որպես ակտիվ քաղաքացիներ, ինչը եւ մենք անում ենք:

Քանի որ ՀՀ 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք դարձավ Կապանը, հետեւաբար գալիք տարի մեր քաղաքը լինելու է երիտասարդական միջոցառումների կիզակետում: Կապանում իրականացվելու են տեղական եւ միջազգային երիտասարդական ծրագրեր՝ դրանցում ներգրավելով համայնքի եւ մարզի երիտասարդներին ու երիտասարդական կազմակերպություններին:

- Որպես համայնքապետ՝ պարբերաբար հանդիպում եք Կապան քաղաքի, ինչպես նաեւ հարեան գյուղական համայնքների բնակիչների հետ, ունեք ընդունելության օրեր, ինչ խնդիրներ են բարձրաձայնում նրանց:

- Զաղաքացիները, որոնց հետ եմ հանդիպում եմ, հիմնականում դիմում են աշխատանքի տեղավորման եւ դրամական օգնության խնդրանքով:

- Պարոն Փարսյան, ինչպե՞ս է Ձեզ հաջողվել մեկ տարում այսքան ծրագրեր կյանքի կոչել եւ արժանաբար համայնքի բնակչության սիրուն ու հարգանքին:

- Կարծում եմ՝ այդ ամենը հնարավոր չէր լինի, եթե չլիներ համայնքապետարանի պրոֆեսիոնալ անձնակազմը, իմ

Անարբերության հրավառություն. երկրորդ ձմեռն է, ինչ հրդեհից փուժած չորս ընտանիք Խանածախում փուն չունեն, իսկ նրանց խնդրով ոչ ոք չի զբաղվում

2018 թվականի սեպտեմբերի 9-ին՝ գիշերվա ժամը երկուսին բռնկված հրդեհից Չորսի փարածաշրջանի Խանածախ գյուղի չորս ընտանիք զրկվեց փարիների չարչարանքով ձեռք բերած կայք ու գույքից, ամենակարևորը՝ հարազատ օջախում ապրելու հնարավորությունից:

Չորս ճարակ էր դարձել նաեւ զոհված ազատամարտիկի հայր, 85-ամյա կենսաթոշակառու Չրանտ Բաղդասարյանի տունը: Վաստակաշատ մանկավարժը դիմել էր հանրապետության վարչապետին, ՀՀ պաշտպանության նախարարին (քանի որ զոհված ազատամարտիկի հայր է), Սյունիքի մարզպետներին, թիվ 12 ընտրատարածքի բոլոր վեց պատգամավորին, բայց ոչ մի արձագանք:

Պատահարին անդրադարձել էր նաեւ «Սյունյաց երկիր» թերթը (21 նոյեմբերի 2018 թ., N 28). «Ով պետք է զբաղվի Խանածախում հրդեհված չորս տան խնդրով, չէ՞ որ արդեն ձմեռ է, իսկ մարդիկ գլխի վար ծածկ չունեն» վերնագրով հրապարակված: Բայց՝ քար անտարբերություն:

Իրողությունն այն է, որ երկրորդ ձմեռն է, սակայն հրդեհից տուժած ընտանիքներն ապրում են անորոշության մեջ, թե երբ ի վերջո գլխի վրա ծածկ կունենան, իսկ նրանց հրդեհից կհավեր դարձած տներն անտարբերության հուշարձան են հիշեցնում:

Բայց մինչեւ երբ, եւ ով առաջինը ձեռք կմեկնի աննախադեպ պատահարից տնանկ դարձած ընտանիքներին ու անորոշության սրտմաշակ զգացողություն ունեցող մարդկանց:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Բաց նամակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին

Մեծարգո պարոն վարչապետ

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:

Ես գնահատում եմ Ձեր կատարած աշխատանքները եւ Ձեզ հետ եմ՝ հանուն մեր երեխաների, հանուն ապագայի, հանուն միասնական, ազատ, անկախ, հզոր Հայրենիքի:

Անդրանիկ եւ Հարություն պապերս կռվեցին ֆաշիզմի դեմ Հայրենական մեծ պատերազմում եւ նահատակվեցին հանուն Հայրենիքի:

Ես պայքարել եմ պայքարում եմ իմ Հայրենիքում հանցագործ ռեժիմի տականքների դեմ, հանքագործի դեմ, ովքեր տասնամյակներ շարունակ բարբարոսաբար թալանում եւ թունավորում են մեզ, ձեզ, մեր ապագա սերունդներին, մեր երկիրը:

Այնպիսի զգացողություն է, կարծես հանքագործը լավաշի ցեխ են բացել եւ բաժանում են ամենքին իրենց բաժինը:

Ոչ մի քրեական գործ չկա:

Սա ինչ է կոչվում:

Հայաստանի ընդերքը հայ ժողովրդի հարստությունն է եւ վերջ:

Մարդու ապրելու իրավունքները տասնամյակներով անտեսել են:

Ամբողջ Սյունիքն աղետի գոտի է:

Ո՞ր են ՀՀ ԱԱԾ-ն, հատուկ ծառայությունները, ոստիկանությունը...

Ո՞ր է Մարդու իրավունքների պաշտպանը...

Ժամանակն է «Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը վերադարձնել պետությանը, ժողովրդին:

Այդ ամենի իրավական բոլոր հիմքերը կան:

2020 թվականը լինի հաղթանակների տարի հայ ժողովրդի համար:

Ճշմարտությունը եւ արդարադատությունը կմիավորեն հայ ժողովրդին:

Կեցցե միասնական, հզոր, ազատ անկախ Հայաստանը, որտեղ ապրելու ենք մենք եւ մեր երեխաները:

Աստված պահապան հայ ժողովրդին:

11.01.2020

Francie Marseille Զաջարան Նյուրթի աղբյուրը՝ «ԶԱՐԹՈՒՆԸ» Հայ-ֆրանսիական բարեգործական հասարակական կազմակերպություն

Ընտանիքը, ընկերները, մարդիկ, ովքեր միշտ իմ կողքին են եղել եւ նպաստել են այդ ծրագրերի իրագործմանը:

Իսկ թե ինչպես եմ արժանացել համայնքի բնակչության սիրուն... Երեւի թե միշտ անկեղծ եմ եղել նրանց հետ, սին խոստումներ չեմ տվել, եւ իմ խոսքն ու գործը համընկել է, եթե այդպես չլիներ, ապա նրանք կկորցնեին թե՛ սերը եւ թե՛ հարգանքն իմ նկատմամբ: Համենայն դեպս, այս մեկ տարվա ընթացքում փորձել եմ ինչ-որ չափով թեթեացնել կապանցիների մտահոգություններն ու լուծել նրանց խնդիրները:

Ինչ կարեւորություն ունեն Ձեզ համար վերը նշված բոլոր հաղթանակները՝ «Տարվա քաղաքապետ 2019», «Երիտասարդական մայրաքաղաք 2020», «Մշակութային լավագույն համայնք 2019», ինչպես նաեւ Ձեր գործունեության արդյունքում տարբեր ոլորտներում արձանագրված բարձր ցուցանիշերը:

Այս հաղթանակները մեր բոլորիս կատարած աշխատանքի գնահատականն են, ինչն իր հերթին եւ պարտավորեցնում, եւ՝ ոգետրում է: Երբ կատարած աշխատանքը գնահատական է ստանում արդեն հանրապետության մակարդակով, եւ պատասխանատվության զգացումն է ավելանում, եւ՝ նոր մոտիվացիա է ձեւավորվում ավելիին հասնելու:

Ինչ սկզբունքներով եք առաջնորդվում, ունե՞ք կարգախոս:

- Հակիրճ պատասխանեն հար-

ցին՝ շատ աշխատել, քիչ խոսել կամ գոնե կատարած աշխատանքին համաչափ խոսել:

Պարոն Փարսյան, բավականին մեծ է Ձեր աշխատանքային զբաղվածությունը, կարողանում եք ժամանակ հատկացնել ընտանիքին, երեխաներին:

- Ցավոք, բավական խիտ ու ծանրաբեռնված աշխատանքային գրաֆիկիս պատճառով շատ քիչ ուշադրություն եւ ժամանակ եմ հատկացնում ընտանիքիս, բայց չեմ պատրաստվում այլեւս այդպես շարունակել:

Ինչ ոգով եւ արժեքներով եք դաստիարակում Ձեր երեխաներին:

- Իմ երեխաներին դաստիարակում եմ բոլոր այն արժեքներով, որոնք բնորոշ են ցանկացած հայկական ավանդական ընտանիքին:

Ինչպիսի՞ Կապանի մասին եք երազում:

- Ես երազում եմ, որ յուրաքանչյուր կապանցի նախ եւ առաջ սիրի իր քաղաքը, ինչպես իր տունը, քաղաքին վերաբերվի ինչպես իր շատ կարեւոր մի մասնիկի, որի մաքրությունը, բարեկեցությունը ու գեղեցկությունն իր համար առաջնային կարեւորություն ունեն:

Ապագայում կցանկանայի տեսնել երջանիկ, համաչափ զարգացող, բարեկարգ, հարմարավետ, լուսավոր ու մաքուր, դրսում բնակվող կապանցիների եւ, ինչու ոչ, նաեւ մեր հայրենակիցների աչքում առավել գրավիչ ու ծաղկուն քաղաք:

Հարցազրույց՝ ՍՈՒՍԱՆԱ ԹԱՄԱՋՅԱՆԻ

Սյունիքում շարունակվում է ձմեռային զորակոչը



Դուք գնում եք պաշտպանելու, ամրապնդելու ձեր պապերի, հայրերի անձնագր-հույան գնով ձեռք բերածը: Եղեք նրանց արժանի հետնորդներ: Խաղաղություն լինի հայոց աշխարհում: Անփորձանք ծառայություն եւ բարի վերադարձ եմ մաղթում ձեզ: Սյունիքի մարզպետի անունից

զորակոչի առթիվ հայրենիքի ապագա պաշտպաններին շնորհավորեց եւ անվտանգ ծառայություն մաղթեց մարզպետարանի զորահավաքային բաժնի պետ Արսեն Գրիգորյանը:

Ապագա զինվորներին բարեմաղթանքներ հղեցին Կապանի համայնքապետի տեղակալ Դավիթ Հայրապետյանը, Կապանի երկրպահ կամավորների միության նա-

խագահ Սուրիկ Հովսեփյանը:

Կապանի համայնքապետարանը զինակոչիկների համար առաջին անհրաժեշտության պարագաների փաթեթներ էր պատրաստել:

40 զինակոչիկ երկրորդ զորակոչին մեկնեց հանրապետական հավաքակայան՝ համալրելու Հայոց բանակի շարքերը:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Սերո Խանգադյանը և Արցախյան շարժումը



ՅԵՐՍԵՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծմանը նպաստող դերակատարը կամ համազայնի շարժման ծավալման գործում անուրանալի դերակատարություն է ունեցել հայ մեծանուն արձակագիր, պատմավիպասան Սերո Խանգադյանը, որ առաջին իսկ օրերից ժողովրդի կողքին էր՝ որպես պայքարի գաղափարակիր ու կազմակերպիչ:

Նա ոչ միայն պատմության մեջ էր՝ իր գրական նախատիպերի ու հերոսների հետ, այլև պատմություն կերտող անհատականություն էր: Որպես ազգային-հայրենասիրական բացառիկ գիտակցություն ունեցող գրող՝ Խանգադյանը երբեք անմասն չի մնացել հայ ժողովրդի համար դժվարին, օրհասական ու բախտավճիռ տարիների հիմնախնդիրներից: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ մեկնելով ռազմաճակատ՝ անցավ պատերազմական իրադարձությունների բովանդակում և համարողկային տագնապների մղումով էլ գրել վերցրեց՝ խոստովանելով իր «պատերազմին ինձ գրող դարձրեց»: Այդպես էլ 1980-ական թվականների վերջին սկիզբ առած Ղարաբաղյան շարժման ժամանակ Խանգադյանը բարձր քաղաքացիությունը դրսևորեց իր գրական ու իրապարակախոսական հարուստ պաշարն ի սպաս դրելով պատմական արդարությունը վերականգնելու երախտաշատ գործին:

Թե որպես գրող, թե որպես գործիչ նա միշտ հայրենիքի ոգին վառ էր պահում: Խանգադյանի գլխավոր ու մնայուն մտասերեռումներից մեկն Արցախի հարցն էր, հայրությանը պարտադրված գոյակիճակի բացահայտումն ու դրդապատճառների դատապարտումը: 1988-ի շարժումը պայմանավորված էր նաև խորհրդային ժամանակաշրջանի՝ հայրենասիրական գործընդեղ երակայնությանը, համարակարգի վերանայմանը, նամակների, ելույթների, տարբեր մարդկանց հետ հանդիպումների ու զրույցների վերաքաղությունները Ղարաբաղյան շարժման ընդհանուր հիմնապատկերում առանձնակի նշանակություն են ստանում, դառնում ժամանակաշրջանի հայելին:

Չայաստանի ազգային արխիվում պահվող 1991 թվական, փետրվարի 7 թվականին ունեցող մի նամակում² դիմելով Ափյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին՝ Խանգադյանը գրում է, որ տպագրության է պատրաստել երեք ձեռագիր, որից մեկը «Ո՛ր էս գալիս, այ գարուն. Ղարաբաղը կրակների մեջ» գիրքն է: Համառոտ ծանոթացնելով գրքի բովանդակությանը՝ նա խնդրում է կոմիտեին նյութական միջոցներ տրամադրել և գիրքը տպագրել արտասահմանում: Նամակում Խանգադյանը վկայում է Նաե Երկու այլ, ընթերցողին անձանթ, անտիպ գործերի մասին՝ «Հայոց Նոյատուհնը կործանված» խորագրով, որն «ընդգրկում է Նախիջեանի հայության ոչնչացման արյունոտ պատկերը՝ 1918-1983 թվականներին: 20-22 հեղինակային մամուլ», ինչպես նաև «Բեկոր-բեկոր Հայաստան», որն ընդգրկում է Խանգադյանի ուղեգրությունները՝ Իրաքում, Լիբանանում, Եգիպտոսում ու Սիրիայում:

1992 թվականի հոկտեմբերի 18-ին Վարդան Հակոբյանին հասցեագրած մի նամակում³ դարձյալ խոսելով ««Ո՛ր էս գալիս, այ գարուն. Ղարաբաղը կրակների մեջ»» «հզորությամբ անչափելի» գրքի հնարավոր տպագրության մասին, պարզում է բոլորովին այլ կառուցվածք՝ «Եռահատոր է՝ Ա.Բ.Գ. գրքեր - 1988, 1989, 1990: Պատրաստի»: Ավելին՝ գրում է, որ չորրորդ ու հինգերորդ գրքերը «հիմա է հյուսում», «այսինքն՝ 1991 և 1992: Նույն ոգով»: Գիրքը, սակայն, լույս տեսավ հետմահու՝ 2006 թվականին՝ հեղինակի ակնարկած վերնագրային կառույցի երկրորդ մասով՝ «Ղարաբաղը կրակների մեջ»՝ բաղկացած երեք ասքից: Թռռան հետ օրապահանջ հարցուպատասխանի խորհրդանշական պատկերով սկսվող «մատյանն» ընդգրկում է 1987-ի դեկտեմբերից մինչև 1988-ի դեկտեմբեր Խանգադյանի գրառումները, ուստի երթադրելի է, որ այն հեղինակի ակնարկած եռահատորի Ա գիրքն է միայն: Բ, Գ, հետևաբար եւ 1991, 1992 թվականները լուսաբանող չորրորդ, հինգերորդ գրքերի ձևակառուցումն են անհայտ: Գրող, պատմաբան Բագրատ Ուլուբաբյանին հասցեագրած նամակներից⁴ մեկում (27 հունվարի 1993թ.) Խանգադյանը ակնարկում է դարձյալ մեզ անհայտ «Արցախյան կանչեր» խորագրով վեպի մասին, որի վրա «աշխատում է տարուց ավել», եւ նշում նաեւ, որ «վերնագիրը պայմանական է, գուցե այլ անուն տա»:

Ընթերցողին Խանգադյանի գրքով Արցախի պատմության գեղարվեստական պատկերման մի փառահեղ գործ է միայն հայտնի՝ «Շուշի»-ն՝ գրված Արցախյան շարժման անմիջական ազդեցությամբ՝ Շուշիի ազատագրության նախաշեմին՝ 1991 թվականին, իսկ հետմահու հրատարակված «Ղարաբաղը կրակների մեջ»-ը վավերագրություն է, որը, ինչպես ինքն է նշել, ամբողջացված է:

Գեղարվեստական վավերագրությունը հաճախ անվանում են մեմուարային գրականություն, որի մեջ մտնում են հուշագրությունը, ուղեգրությունը, փաստագրությունը, օրագրությունը եւ էսես: Խանգադյանի երկում համարվում են եւ հուշագրությունը, եւ օրագրությունը, եւ փաստագրությունը, մասամբ նաեւ էսեսն՝ հեղինակի ոճի անհատականությանը: Թեեւ վավերագրությունը հատկանշվում է պատմաճանաչողական որոշակի արժեքով, սակայն հեռու է կատարելությունից: Հեղինակն ինքն էլ խիստ է արտահայտվել իր գրքի մասին, մատնանշել արագագրության պատճառները: «Թող ներեն ինձ նրանք, ում այս գործը կատարյալ չթվա: Որքան կարողացա, այն արի»:⁵ «Մի տարում այնքան, որքան արել եմ վաթսու տարում՝ նույն Լեռնային Ղարաբաղի ցավի, Հայոց դատի այս մի ճյուղի արդար պահանջին վերաբերող: Եվ որպեսզի կարողանամ շատից-քիչ բավարարել Անդրանիկի անզիջում պահանջը, որ պահանջն է ողջ հայ ժողովրդի, եւ արտակարգ գործ սկսեցի՝ քայլ առ քայլ տալով Հայոց Արցախ-Ղարաբաղի կործանման եւ նրա դուրսագնական պայքարի նշխարները՝ հանուն գոյության,

հանուն թուրքի ստրկությունից նրա փրկության»⁶: Խանգադյանը Ղարաբաղի մասին պատմող «արյունոտ» գիրքը ժառանգում է թռռանը. «Քեզ ասես, ժառանգ իմ, եւ դու կասես աշխարհին: Իմացիր, ճշմարտությունը չի սպանվում»⁷: Դարերի խորքերը չէ, որ պատրաստվում է տանել նրան. «Ես այստեղ միայն քեզ կներկայացնեմ Հայոց Ղարաբաղի անգութ կեղծման պատմությունը՝ 1920 թվականից սկսած, այն էլ՝ համառոտ ու պարզեցրած, որ քեզ համար մարտիկ լինի, որ դու երբեք չմոռանաս մեր ցավը ու ավանդես քո թռռներին»⁸:

Իրապես, «Ղարաբաղը կրակների մեջ»-ը հրապարակագրական երկ է՝ մատուցված որոշակի գեղարվեստական հանդերձանքով: Ամեն դեպքում, Խանգադյանի վավերագրումները դուրս են գալիս անձուկ տեղեկատվության, օրագրության շրջանակներից՝ հաճախ գեղարվեստականանում են՝ դառնալով ֆեյիտոն, ակնարկ, էսսե, պամֆլետ եւ այլն:

«Կործանման սկիզբը» խորագրով առաջին ասքում 1920-ական թվականների պատմական եղելությունները զուգահեռելով 1970-80-ականների անցուդարձի հետ՝ Խանգադյանը խորհրդածում է, բանավիճում, հեզնում, նկարագրում «եղբայրական» ժողովրդի՝ Ղարաբաղի հայության շրջանում իրականացրած սպանդի սահմաններում տեսարաններ, անխնայորեն քննադատում ազգամիջյան հարաբերությունների հռչակ երեսյթները, ազգային ինքնորոշման իրավունքի շարունակական ոտնահարումն ու անտեսումը, ցույց տալիս պատմական երեսյթների պատճառահետևանքային կապերը, որոնց վկայակոչման նպատակը մեկն է՝ ընդգծել Արցախյան հարցի լուծման միակ ուղին՝ ինչ գնով ուզում է լինի՝ թողափել տասնամյակների անպատիվ ստրկությունը եւ միավորվել մայր հայրենիքին:

Ամբողջ շարադրանքում պատկերավոր բացատրություններով Խանգադյանն ընդգծում է խՍՀՄ ղեկավարների անտարբերությունը, մեղավորները, նաեւ մեղասկոցությունը Ղարաբաղին պարտադրված ձևակառուցի նկատմամբ:

«Ղարաբաղը Ադրբեջանին վերադարձնելու հարցը Անդրերկրկումը 1921 թվականի հունիս-հուլիս ամիսներին քննարկել է ութ անգամ: Ութ անգամ էլ որոշվել է երկրամասը վերադարձնել Հայաստանին: Սակայն... Սակայն չի վերադարձվել հենց իր՝ շատ բաներ խոստացող, քիչ բան կատարող Լենինի չարակամությամբ»⁹: Քանիցս շեշտվում է, որ ձևակառուցական հարցում խորհրդային Հայաստանի ժողովուրդն ու ՀԿԿ Կենտկոմի բյուրոն ոչ միայն շահագրգիռ չէին, այլև կատարյալ անզորություն ցուցաբերեցին՝ զուրկ պետական ըմբռնողությունից: «Երեւանում մեր ղեկավարները, գրում է Խանգադյանը, գրեթե բոլորը չէին ուզում զբաղվել Ղարաբաղի հարցով կամ զբաղվում էին ահաբեկված, կիսատապառ: Ավաղ, Հայաստանի այդ օրերի ղեկավարները ոչ թե մտահոգված էին Կարսի, Նախիջեանի ու Ղարաբաղի փրկության հարցերով, այլ «բուլեփկորեն» միմյանց միս էին ուտում, իրենց լրարիկ գեներն ուղղում ոչ թե հայությանը Նախիջեանում ոչնչացնող թուրքերի, այլ դաշնակցականների դեմ»¹⁰:

Հայ պատմության խորքից եկող եւ մինչեւ մեր օրերը հասնող նույն պիտան է, որ Խանգադյանի գրչին փոխանցում է տխուր պարտականությունն արձանագրելու, պախարակելու խորհրդային ղեկավարների որդեգրած այդ այպանելի կեցվածքը, «պետական ու կուսակցական անզորությունը», որ կրկնվեց նաեւ

շարժման տարիներին: «Հայկական խՍՀ Գերագույն խորհուրդը վախկոտաբար ժամանակին չարձագանքեց ԼՂԻ մարզի որոշմանը՝ մտնել Հայկ. խՍՀ-ի կազմի մեջ, որ կայացավ 1988-ի փետրվարի 20-ին: Այդ խնդրանքի քննարկումը հետագայում ամբողջ չորս ամիս, մինչեւ Ադրբեջանի նարինովականները կարողացան Մոսկվայում իրենց արյունոտ գիծն անցկացնել»¹¹,- եզրակացնում է Խանգադյանը:

Արտաքին վտանգների ու դրանց պատճառների դեմ ընդվզող, ըմբոստացող Խանգադյանը հաճախ նույն վերաբերմունքն է արտահայտում ներքին վտանգների եւ նրանց հետեւում թաքնվող պատասխանատուների դեմ:

Գրողը իրաշալի ծանոթ է հայ ժողովրդի պատմությանը, փաստական նյութի առատ գործածությամբ էլ ներկայացնում է Արցախի ազատագրական պայքարի նախադրյալները: 20-րդ դարակազմի ներքաղաքական վիճակի մանրակրկիտ նկարագրությունը մի նպատակ ունի՝ ի ցույց դնել նորօրյա իրականության կենսահիմքերը՝ պատմության փորձին առեթսվելու ձևակառուցականությամբ:

Խանգադյանի համար հստակ է՝ «Ստալինի գեղեիկ միջամտությամբ որոշվեց Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական խՍՀ-ի սահմաններում»¹²: Հայ ժողովրդի դեմ կատարված նոր ոճագործության, պետական ու կուսակցական ուրացության պատասխանատուն հենց Նարինով-Ստալինի երկյակն էր՝ Օսմանյան Թուրքիայի թելադրանքով: Նույնն արեց նաեւ Բրեժնեւ-Սուխով սեւ լծասարքը՝ քանիցս մերժելով ԼՂԻ-ի՝ տարեցտարի նորացող հայ բնակչության կամավոր սկզբունքի դրսևորումները. ժողովուրդը նախ՝ 1966-ին 45.000 ստորագրությամբ, ապա 1977-ին՝ 70.000 ստորագրությամբ, հայրենիքին միավորվելու պահանջով դիմեց Մոսկվայ՝ կրկնակի մերժվելով եւ շարունակելով ենթարկվել անօրինակ հալածանքների: 1977-ին, երբ ընդունվում էր նոր Սահմանադրությունը, ավելի քան մեկ միլիոն հայերի խնդրանքը Բրեժնեւին, որ գտնե ԼՂԻ մարզի պաշտոնական անվանն ավելացվի «հայկական» տերմինը, ինչպես երկրի բոլոր մյուս ինքնավար մարզերն ունեին, եւ դեմ նետեցին: Մեծագույն ցավով է Խանգադյանը երկրորդում պատմական այդ ցավալի փաստերը, ոգեսթափության կոչ անում՝ տալով համարձակ գնահատականներ:

Ներագային բարդ իրադրության մեջ տեսլետների, դիրքորոշումների հստակ բանաձեռումներով Խանգադյանը լուսաբանում է համազգային շարժման նպատակը, ձևավորում, ուղղորդում է հայ ձեռագրվածներին, ստեղծում հանրային կարծիք: Իր համամիութենական հեղինակությամբ, գրչի ուժով, կոնկրետ գաղափարական աշխատանքներով Խանգադյանը մեծապես նպաստեց, որ շարժումը վերածվի համաժողովրդական պայքարի: Նա օրվա տագնապների մեջ էր, վերահաս իրադարձությունների, հանդիպումների ու քննարկումների կենտրոնում, որոնց մասին օրագրային ձգարտությամբ ներկայացնում է իր մատյանում: Այսպես, օրինակ, «Դեպքերը նոր թափ են առնում: Գրողների տանն են: Առաջին Մոսկվայից ժամանել են Դուգինս ու Լուկյանովը: Մարդկային վիթխարի հոսանք է բարձրանում Բաղրամյան պողոտայով: Ես, Սիլվան, Հենրիկ Իգիթյան ու Վարդգես Պետրոսյան եւս միացանք ցուցարարներին: Հզոր, վեհ ցույց է Կենտկոմի շենքի առաջ»¹³ (23.08.88թ.): «Ժամը 12-ին գրողների ժողով կայացավ: Լսեցինք հայ ժողովրդին հղած Գորբաչովի ուղերձը: Իմ խոս-

չարժման տարիներին: «Հայկական խՍՀ Գերագույն խորհուրդը վախկոտաբար ժամանակին չարձագանքեց ԼՂԻ մարզի որոշմանը՝ մտնել Հայկ. խՍՀ-ի կազմի մեջ, որ կայացավ 1988-ի փետրվարի 20-ին: Այդ խնդրանքի քննարկումը հետագայում ամբողջ չորս ամիս, մինչեւ Ադրբեջանի նարինովականները կարողացան Մոսկվայում իրենց արյունոտ գիծն անցկացնել»¹¹,- եզրակացնում է Խանգադյանը:

Արտաքին վտանգների ու դրանց պատճառների դեմ ընդվզող, ըմբոստացող Խանգադյանը հաճախ նույն վերաբերմունքն է արտահայտում ներքին վտանգների եւ նրանց հետեւում թաքնվող պատասխանատուների դեմ:

Գրողը իրաշալի ծանոթ է հայ ժողովրդի պատմությանը, փաստական նյութի առատ գործածությամբ էլ ներկայացնում է Արցախի ազատագրական պայքարի նախադրյալները: 20-րդ դարակազմի ներքաղաքական վիճակի մանրակրկիտ նկարագրությունը մի նպատակ ունի՝ ի ցույց դնել նորօրյա իրականության կենսահիմքերը՝ պատմության փորձին առեթսվելու ձևակառուցականությամբ:

Խանգադյանի համար հստակ է՝ «Ստալինի գեղեիկ միջամտությամբ որոշվեց Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական խՍՀ-ի սահմաններում»¹²: Հայ ժողովրդի դեմ կատարված նոր ոճագործության, պետական ու կուսակցական ուրացության պատասխանատուն հենց Նարինով-Ստալինի երկյակն էր՝ Օսմանյան Թուրքիայի թելադրանքով: Նույնն արեց նաեւ Բրեժնեւ-Սուխով սեւ լծասարքը՝ քանիցս մերժելով ԼՂԻ-ի՝ տարեցտարի նորացող հայ բնակչության կամավոր սկզբունքի դրսևորումները. ժողովուրդը նախ՝ 1966-ին 45.000 ստորագրությամբ, ապա 1977-ին՝ 70.000 ստորագրությամբ, հայրենիքին միավորվելու պահանջով դիմեց Մոսկվայ՝ կրկնակի մերժվելով եւ շարունակելով ենթարկվել անօրինակ հալածանքների: 1977-ին, երբ ընդունվում էր նոր Սահմանադրությունը, ավելի քան մեկ միլիոն հայերի խնդրանքը Բրեժնեւին, որ գտնե ԼՂԻ մարզի պաշտոնական անվանն ավելացվի «հայկական» տերմինը, ինչպես երկրի բոլոր մյուս ինքնավար մարզերն ունեին, եւ դեմ նետեցին: Մեծագույն ցավով է Խանգադյանը երկրորդում պատմական այդ ցավալի փաստերը, ոգեսթափության կոչ անում՝ տալով համարձակ գնահատականներ:

Ներագային բարդ իրադրության մեջ տեսլետների, դիրքորոշումների հստակ բանաձեռումներով Խանգադյանը լուսաբանում է համազգային շարժման նպատակը, ձևավորում, ուղղորդում է հայ ձեռագրվածներին, ստեղծում հանրային կարծիք: Իր համամիութենական հեղինակությամբ, գրչի ուժով, կոնկրետ գաղափարական աշխատանքներով Խանգադյանը մեծապես նպաստեց, որ շարժումը վերածվի համաժողովրդական պայքարի: Նա օրվա տագնապների մեջ էր, վերահաս իրադարձությունների, հանդիպումների ու քննարկումների կենտրոնում, որոնց մասին օրագրային ձգարտությամբ ներկայացնում է իր մատյանում: Այսպես, օրինակ, «Դեպքերը նոր թափ են առնում: Գրողների տանն են: Առաջին Մոսկվայից ժամանել են Դուգինս ու Լուկյանովը: Մարդկային վիթխարի հոսանք է բարձրանում Բաղրամյան պողոտայով: Ես, Սիլվան, Հենրիկ Իգիթյան ու Վարդգես Պետրոսյան եւս միացանք ցուցարարներին: Հզոր, վեհ ցույց է Կենտկոմի շենքի առաջ»¹³ (23.08.88թ.): «Ժամը 12-ին գրողների ժողով կայացավ: Լսեցինք հայ ժողովրդին հղած Գորբաչովի ուղերձը: Իմ խոս-

չարժման տարիներին: «Հայկական խՍՀ Գերագույն խորհուրդը վախկոտաբար ժամանակին չարձագանքեց ԼՂԻ մարզի որոշմանը՝ մտնել Հայկ. խՍՀ-ի կազմի մեջ, որ կայացավ 1988-ի փետրվարի 20-ին: Այդ խնդրանքի քննարկումը հետագայում ամբողջ չորս ամիս, մինչեւ Ադրբեջանի նարինովականները կարողացան Մոսկվայում իրենց արյունոտ գիծն անցկացնել»¹¹,- եզրակացնում է Խանգադյանը:




Յրանդ Էլջյանը 70 տարեկան է

Նոր տարվա առաջին օրը ծանաչված գեղանկարիչ եւ մեր թերթի բարեկամ Յրանդ Էլջյանը դարձավ 70 տարեկան: Ի սրտե շնորհավորում ենք նրան՝ հոբելյանի առթիվ, մաղթում ամուր առողջություն, ստեղծագործական նոր հաջողություններ:

Յրանդը նաեւ ստեղծագործում է նրա պատմվածքները տպագրվել են շրջանային «Կապան», մարզային «Սյունիք» եւ «Սյունյաց երկիր» թերթերում, հանրապետական մամուլում:

Ստորեւ ներկայացնում ենք Յրանդ Էլջյանի նոր պատմվածքը՝ «Բնորդ Արշուն» վերնագրով:



Բնորդ Արշուն

Արշակ քեռին բնորդ էր: Նրա դիմագծերի մեջ թաքնված էր ՄԱՐԴ արարածի տառապանքների ամբողջ շարանը: Լռակյաց էր, նստած, թե՛ շարժման մեջ Արշուն իր կերպարով նման էր մի չբացահայտված գաղտնագրի, անխոս, անչափ բարի, ցանկացած պահի օգնական: Իր աշխատանքի մեջ խստապահանջ եւ բացառիկ ծշտախոս անհատ էր, ում մեջ ամփոփված էին մեզ անհայտ անցյալի տառապանքները:

Ինստիտուտի գեղանկարչական դասերից գատ, ես հաճախում էի նաեւ գեղանկարչական ստուդիա: Այն փոքրիկ մի խումբ էր, որտեղ հաճախում էին տարբեր տարիքի եւ տարբեր մասնագիտությունների մարդիկ: Ստուդիան տեղավորված էր «Մոսկվա» կինոթատրոնի շենքից հարավ՝ «Երեւան» հյուրա-

նոցի հարեանությամբ: Ընեքը հին ճարտարապետական կառույց էր, իսկ նկուղում, որի մուտքը հետնամասից էր սկսվում, թատերական խումբն էր, որի հարեանությամբ էլ մեր՝ նկարչական խումբը:

Աշնան մի օր՝ ինստիտուտի գեղանկարչության դասից հետո, ես մոտեցա քեռի Արշունին եւ խնդրեցի, որ ստուդիայում աշխատի որպես բնորդ՝ դիմանկար կատարելու համար: Նա սիրով համաձայնեց: Միասին որոշեցինք մեկ ժամվա արժեքը, եւ ժամագրվեցինք հանդիպել «Երեւան» հյուրանոցի դիմաց:

Յրանդը օրը շենքի հետնամուտքից եւ նրան ուղեկցեցի դեպի նկուղ: Աստիճանների երկրորդ քայլին Արշուն կանգ առավ, ձեռքը մեկնեց կամարածեւ հենասյունին եւ չկարողանալով պահել հավասարակշռությունը՝ տապալվեց աստիճանների հարթակին: Ես նրան

անմիջապես փորձեցի օգնական լինել: Մի քանի վայրկյան հետո սիրով աջքերով նայեց ինձ եւ երկու ձեռքով բռնեց իմ գլուխը՝ ճշաց.

- Տեր Աստված, մեղա քեզ, Տեր:
- Ի՞նչ պատահեց, - հարցրի ես:

Արշուն նայեց ինձ: Զգալով իմ անհանգիստ վիճակն ու վախը՝ հառաչեց, ոտքի կանգնեց ու ինձ առանջնորդեց դեպի նկուղ:

Ես չկարողացա հասկանալ ի՞նչ կատարվեց քեռի Արշունի հետ, լաց էր, ճի՛շ, թե՛ դժոխքից փախչելու փորձ:

Մառանածեւ սրահով մտանք արվեստանոց: Ես ծանոթացրի վարպետ Կառլենի հետ: Մի քանի րոպեից Արշուն արդեն նստած էր իր բնորդի սեղանին՝ գլուխը կախ, ձեռքն այտին, գրքի հետ՝ ինչպես ընթերցող, այդպիսին էր բնորդի առաջադրանքը: Մենք սկսեցինք դիմանկարը: Կիսաճաղատ, հայկական թթով, երկար դեմքով մի ծերուկ էր բնորդ Արշուն: Մի քանի րոպե անց բնորդի դեմքը սկսվեց գունատվել, ճակատի կնճիռները դարձան խոր ակոսված, աչքերի բիբերը մեծացան, ունքերը կամաց - կամաց խրվեցին ակնափոսերը: Արշուն մտքով հասել էր դժոխքի դռները: Մեր հայացքի ներքո նա հոգեվարքի մեջ էր: Թանձր տխրությունը կտրտելու պատրվակով, մենք ոտքի կանգնեցինք: Վարպետ Կառլենը, ով մեզ հետ միշտ ձեպանկարում էր, հանկարծ հարցրեց.

- Ի՞նչ պատահեց, Արշակ քեռի: Արշուն վեր թռավ տեղից, բղավեց, ձեռքերով բռնելով գլուխը՝ սկսեց հեկեկալ: Երեխայի պես լաց էր լինում: Բոլորս լռել էինք: Ի՞նչ կատարվեց: Հինգ րոպե ընդմիջում հայտարարվեց: Արշունի հոգում տարերք էր ...
- Արշակ քեռի, եթե վատ եք զգում, կարող եք գնալ, ոչինչ, մենք դասը կշարունակենք այլ



առաջադրանքով, - ասաց վարպետ Կառլենը:

Արշուն լուռ էր: Հանեց ծխախոտն ու թուրքախոտն խնդրելով, դողացող ձեռքերով վառեց այն, մի քանի քրկա արձակելուց հետո վերացած՝ ներկայից սկսեց խոսել.

- Այս սենյակում մեր պարենի ամբարն էր, այն ժամանակ ես ութ տարեկան էի, կողքի սենյակը գինու մառան էր, մյուս կողմից հացատունը: Մի օր, երբ մեր տան անդամները սեղանի շուրջ նստած ընթրում էին, ներս մտավ բակապահն ու հայտարարեց.

- Բուլդոզերները եկան, ամենուր կրակում են: Մենք վեր թռանք տեղից, շարժվեցինք դեպի հետնամուտքը՝ հայրս, ես եւ քույրս: Ետնամուտքի դռան առջեւ առաջին կրակոցից հայրս վայր ընկավ արնաթաթախ: Ես վախից թռա նկուղի խորքերը, մյուս կրակոցները բարձրացան երկրորդ հարկ եւ սկսեցին թալանել տունը: Այն նման

էր ավազակային թալանի: Մառանից ես լսում էի մորս ու քրոջս ձայնը: Նրանց ձայնակալել էին: Ես մառանում գտնելով գինու կիսադատարկ մի տակառ, թաքնվեցի նրա մեջ: Սկսվեց մառանի թալանը: Տակառի մեջ ես լսում էի նրանց ձայները, ռուսերեն ու թուրքերեն էին խոսում: Գիշերը ես դուրս եկա մառանից ու ինձ համար վերցնելով մի քանի շոր՝ ուղեւորվեցի դեպի հորեղբորս տուն: Նրանց տունը նույնպես դատարկ էր: Այսպես, ես ամիսներ մնացի փողոցներում: Հարեաններից մեկը՝ ինձ գտնելով «Սիլաչի» շուկայի հարակից նրբանցքում, ասաց, որ հորեղբայրս այս կողմերում է եւ փնտրում է ինձ: Երկու օր հետո մենք հանդիպեցինք: Մի քանի շաբաթ հետո անցանք սահմանն ու հայտնվեցինք Թեհրանում: 1954 թվականին մենք գաղթեցինք Երեւան: Այստեղ ես իմացա՝ նորաստեղծ բուլդոզերային կառավարությունն իր բույնը դրել էր մեր տան երկրորդ հարկում: Այնտեղ նստում էին կենտ-

կոմի, կառավարության անդամները... 1920 թվականից մինչ այժմ ես այս տան շրջակայքից խոյս եմ տալիս: Այս տունն ինձ համար քանդվել է վաղուց, այս տանը ես ապրել եմ իմ մանկությունը, իմ պահանջներից հարեան ընկերներիս հետ, հիմա այս տան պատերը ներկված են արյունոտ ձեռքերով... Արշուն դողում էր ամբողջ մարմնով: Նորից ծանր լուրջությամբ: Քեռի Արշուն ոտքի կանգնեց խաչակերպեց.

- Մեղա Քեզ, Տեր աստված, - ասաց ու գնաց:

Նկուղից փողոց մեզ բաժանում էր մի նեղ պատուհան: Պատուհանից դուրս մեքենաների հռնդոնն էր, իսկ պատուհանից ներս՝ լուսամուտի փեղկից արեւի ծերպի շողքի ներքո մեր աչքերի առջեւ ծխախոտների մեջ պարուրված էին Արշունի յուրաքանչյուր տարիների տառապանքներն ու դառնությունները: Նկուղի պատերը բորբոսնել էին հին վերքերից...

քը սա է: - Ղարաբաղը Հայաստանին միավորելու շարժումը նոր չէ: 1965-ին ես ծագեց: Մոսկվայից հանձնաժողով եկավ՝ մեծիչաեակու գլխավորությամբ: Ես ու Էդուարդ Թիսյանը նրա հետ գրույց ունեցանք յոթ ու կես ժամ: Ասացի, որ Գորբաչովը ճիշտ չի դիրքորոշվում ազգային հարցում: Սխալ է, երբ միտինգներ անելը ունանք որակում են իբրեւ վնասակար: Ասում են՝ ամրացնել մեր երկրի ազգերի բարեկամությունը: Այո, ամրացնել, բայց ոչ մեր՝ հայերիս հաշվին: Մեր Կենտկոմում ունանք մեզ մեղադրում են իբր մենք մթազգում ենք հայ եւ աղբրեջանցի ժողովուրդների բարեկամությունը: Սա պրովակացիա է: Բայց ԼՂԻՄ-ի հարցը շուտափույթ պետք է քննարկվի Մոսկվայում՝ Հայկ.ԽՍՀ-ին վերադարձնելու որոշումով: Հայաստանի կառավարությունը պետք է իր բողոքը ներկայացնի Միությունական կառավարությանը եւ պաշտպանի ժողովրդի պահանջը: Սակայն Հայաստանի կառավարությունը վախկոտ է ու ոչինչ չի անում»(27.02.88թ.):

Պատմական փաստերի վկայակոչումներին զուգահեռ գրքում բերվում են «արյունոտ դեպքերի» նկարագրություններ, որպեսզի «շատ միամիտ հայերի համար պարզ լինի, թե ինչ դժոխային վիճակում է ապրում հայը հայի Ղարաբաղում: Ուզում եմ «ինտերնացիոնալիստ» կոչված թողով կուրացած շատերի աչքը բաց անել: Կհաջողվի, չգիտեմ»¹⁴: Խանգաղյանն իրավունք ուներ այդքան հոռետես լինելու, գալիք օրերը գուշակելու: Եվ այդ

բոլոր նախատեսությունները տարիներ անց շոշափելի իրականություն պիտի դառնային: Կյանքն ու իրականությունը ցույց տվեցին, որ այն, ինչ համարվում էր հռետեսություն, իրականում հեռատեսություն էր ու հստակատեսություն: Հայ ժողովրդի տառապանքների ու տխուր ճակատագրի թիվ մեկ պատասխանատուն, խանգաղյանի համոզմունքով, խորհրդային վարչակարգն է, որ հաճախ թիրախ է դառնում նրա նրթագրումներում: «Օ՛, դժոխք, որիդ անունը «խորհրդային է»¹⁵: Խանգաղյանը, մատնանշելով պատմության չարաղետ փորձը, սուր քննադատություններ է ուղղում պետական ու կուսակցական հայ վերնախավին, որ «պարզապես անպետք զանգված է մեզ համար»: Հայի գլխով անցնող սոսկալի իրողություններից հետո գոռալ, թե «մեր երկրում մարդու ազատություն է, ազգերի կատարյալ եղբայրություն, պարզապես անբարոյական սրտխառնուք է»,- գրում է Խանգաղյանը: Ինչպես կարելի է համակերպվել հայի անարդար ճակատագրի հետ, «համակերպվելու հիմնական կողմնակիցներն ու քարոզիչները կուսակցական փափուկ աթոռների ու պետական լիքը ախտոների վրա նստածներն են»¹⁶:

Հայի փորձառությունը, գրողի ու մտավորականի առողջ բնազդը, ազգային խնդիրների լուծման համար պարտավորվածությունը թելադրում էին Խանգաղյանին՝ սթափ հետեւելու իրադարձություններին, ժամանակին ու տեղին արձագանքելու կուսակցական հայավնաս ու պառակտիչ որոշումներին,

Աղբրեջանի ղեկավարների պրովակացիոն ելույթներին, մամուլի հրապարակումներին, որոնց նպատակը բոլոր հնարավոր միջոցներով պատմական ճշմարտության պարտակումն էր: Հատկանշական են Զիա Բունիաթովի հայտնի կեղծաշարադրանքների վերաբերյալ Խանգաղյանի կոշտ դիրքորոշումները, ժխտողական ելույթներն ու բաց նամակները: Գրքում նա առատ մեջբերումներ է անում իր ելույթներից՝ անխնայորեն մերկացնելով «խորհրդային ակադեմիկոսի սքեմ հագած», բարբարոս, ցեղասպան ու աշխարհաքանդիչ տարրերին նոջարի պես երկրպագող, «փորձված ու մոլի կողոպտիչ», պատմության ստոր կեղծարար Զիա Բունիաթովին: «Կամենա, թե չկամենա Բունիաթովը, հայ ժողովուրդն ավելի քան երեք հազար տարի շարունակ իր պետական կազմակերպված էությունն ու բովանդակությունն ուներ եւ ունի իր հայրենիք Հայաստանում: Կարծես թե հենց նրան նկատի ունենալով է ասվում՝ շունը հաչում է, իսկ քարավանը գնում է»¹⁷: Արցախցիների ոտնահարված իրավունքները պաշտպանելու նպատակով Խանգաղյանն անընդհատ իր մտահոգություններն է արտահայտել խորհրդային ղեկավարներին ուղղված նամակներում ու դիմումներում: Վավերագրության մեջ Խանգաղյանը գետնեղել է Ղարաբաղի հարցի շուրջ տեղական ու միութենական մամուլին հղած իր բոլոր խնդրագիր գրությունները, որոնցից շատերը չեն հրապարակվել կամ հրապարակվել են զգալի կրճատումներով:

«Երեւանի «Կոմունիստը» իմ խոսքը չտպագրեց: Դե, պարզ է, «Կոմունիստը» ես հայի թերթը չեմ, իմ թերթը չեմ»¹⁸: «խորհրդային մամուլը կեղծում է ամեն ինչ: Այդ կեղծիքը ես ուժ է ստանում պետությունից»¹⁹: Խանգաղյանը քաղաքներում է արել նաեւ արտասահմանյան թերթերից, որոնք արձագանքել են օրվա իրադարձություններին եւ ավելի ճշգրիտ լուսաբանել Ղարաբաղյան հարցի էությունը՝ առանց տուրք տալու սովետական մտակալապարներին:

Պատմական մեծ հնչեղությունն ունեն հատկապես Բրեժնեւին, Գորբաչովին Խանգաղյանի հասցեագրած նամակները, որոնք ժամանակին լայն, կարելի է ասել ոչ միայն միութենական, այլեւ միջազգային արձագանքներ ունեցան: Վավերագրելով Ղարաբաղյան շարժման ծավալման գրեթե ամբողջ ընթացքը՝ Խանգաղյանը մանրամասնորեն ներկայացնում է նաեւ այդ արմկահարույց նամակների գրության շարժառիթներն ու կենսահանգամանքները:

Առաջին նամակը հասցեագրվել է ԽՍՀՄ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լենինի Բրեժնեւին՝ 1975 թվականի մայիսի 13-ին: Ազգակր կուսակցության Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կետրկովի գեկուցումն էր մարզկոմի պետնում, որ «հակահայկական, հակամարդկային, պանթուրքիստական հայիոյանների կույտ էր»²⁰: Զեկուցումը տպագրվել էր նաեւ «խորհրդային Ղարաբաղ» թերթի 1975 թվականի մարտի 23-ի համարում, որից հետո հակահայ-

կական նույն վտանգավոր կրակը բորբոքել էին նաեւ մարզի շրջանների բոլոր թերթերը: Կետրկովի վարքագծի մասին խանգաղյանը նախ հեռագրել էր Աղբրեջանի կոմկուսի առաջին քարտուղար Յեյդար Ալիեւին, որը չէր արձագանքել: Խանգաղյանը կենտկոմի ղեկավարությանն մեղադրում է բացահայտ հայահարեծ քաղաքապետության վարելու, Լեւոնային Ղարաբաղի հայությանը Աղբրեջանի ծիրաններում խեղդելու համար: Այնինչ «թե՛ սոցալիստ, թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական նկատառումներով Ղարաբաղի Հայկական Ինքնավար Մարզը պետք է մտնի Հայկական Հանրապետության կազմի մեջ»: Նա Բրեժնեւի ուշադրություն է հրավիրում Ղարաբաղի պատկանելության հարցը հանկարծազուտ վճռելու՝ Կետրկովի ապօրինի կեցվածքին եւ պատասխան ակնկալում՝ հորդորելով զսպել զազրախոսին: Խանգաղյանը համոզմունք է հայտնում, որ «խորհրդային պետության ստեղծման առաջին օրերից օրակարգի մեջ մտած Ղարաբաղի հարցը կլուծվի, այն կվերադարձվի Հայկ. ԽՍՀ-ին, դրանով իսկ կամրապնդվի հայ եւ աղբրեջանական ժողովուրդների միջեւ եղած բարեկամությունը, ինչ-որ չափով կբարձրացվի մեր սոցիալիստական կարգերի վարկաբեկված հեղինակությունը»²¹: Խանգաղյանը ցավով նշում է, որ նամակի պատասխան չստացավ, ավելին՝ բոլոր փորձերը՝ այն մամուլում հրապարակելու, ապարդյուն անցան:



Ահա եւ Գյավուրի բերդը. արդյո՞ք սա է Ձագեծորո կամ Յանբադա բերդը

Սոյն բերդի 10-ի մեր արշավի նպատակը Գյավուրի բերդի ենթադրյալ տեղանքին ծանոթանալն էր:

Դժվարին այդ առաքելության ընթացքում մեզ ուղեկցում էր Զարահունջ գյուղից մի հրաշալի անձնավորություն՝ Յարայր Աբրահամյանը, ով քաջատեղյակ է Վարարակնի հովտի, ինչպես եւ Որոտանի կիրճի ամեն մի տեղանքին:

Յարայրի հետ ծանոթացել էինք օրեր առաջ, երբ Զարահունջի միջնակարգ դպրոցի տնօրեն Արմեն Մկրտչյանի հետ (Զարահունջի սրբավայրեր կատարած ուխտագնացության ընթացքում) բարձրացել էինք գյուղի հյուսիս-արեւմտյան լեռնածերպում գտնվող նրա քարանձավը: Այդ օրն էլ ծնվեց Գյավուրի բերդի համատեղ այց կատարելու մեր որոշումը:

Պարզվում է՝ Գյավուրի բերդը Գորիս-Կապան ավտոմայրուղու վրա՝ Զարահունջից 5-6 կմ հարավ գտնվող լեռնաշարքն է, որ սկսվում է հայտնի Ծա-

կերից... Ծակերը, կարծեք, բերդի յուրօրինակ դարպասն են հյուսիսային կողմից:

Մենք բարձրացանք միջնաբերդի ստորոտ, բայց զագաթ չէին չկարողացանք:

Մոտ 30-40մ բարձրության քարաբլուրը բաժրանալու համար պետք է օգտվեինք Արցախյան պատերազմի օրերին միջնաբերդի գագաթից կախված երկաթե աստիճանից, որի ամրությունը եւ հուսալիությունը կասկածի տեղիք տվեցին:

Փոխարենն ուսումնասիրեցինք միջնաբերդի՝ դեռեա պահպանված պատի հատվածները, քարանձավ-անցքերը, մերձակայքում գտնվող գերեզմանատան հետքերը, որտեղ Յարայր Աբրահամյանը մի քանի խաչքար ցույց տվեց:

Կարելի է արձանագրել, որ միջնաբերդից դեպի հարավ-արեւելք եւ դեպի հյուսիս ու արեւմուտք ձգվող լեռնաբազուկները բերդի տարբեր ճյուղավորում-

ներն են:

Իսկ Գորիս-Կապան ավտոմայրուղին, Որոտանի կիրճ մտնելիս, անցնում է հենց Գյավուրի միջնաբերդի ամրոցի հարավ-արեւելյան թեփն միացնող հատվածով, որը տասնամյակներ առաջ է բացվել՝ ավտոճանապարհը կառուցելու նպատակով:

Ինչո՞ւ ենք վստահաբար հայտարարում, որ հենց դա է Գյավուրի բերդը:

Նախ՝ քարահունջիներն են սերնդեսերունդ վկայում, որ այդ բերդը հենց Գյավուրն է:

Զարահունջիների ընդհանրական տեսակետը հայտնել է նաեւ գյուղի պատմության հեղինակ Անդրանիկ Բաղդասարյանը:

Ահա՝ Գյավուրի բերդը «...Յնադարյան մի բերդայեռ է, որը գտնվում է Գորիս-Կապան ճանապարհի աջ մասում, գյուղից հարավ՝ 5-6 կմ հեռավորությամբ:

Սեղանածու լեռան մի զանգված է այն՝ մոտ 30-40 մ բարձրությամբ:

Լեռը բարձրանալու համար անմատչելի է:

Թշնամին ոչ մի կերպ չի կարողացել գրավել բերդը ու անվանել է Գյավուր դալա (անհավատների բերդ):

Բերդում գտնվել են զանազան իրեր՝ ավազան՝ ջուր ամբարելու համար, թռնիկ եւ այլն:

Ստում են նաեւ՝ բերդից մինչեւ Վարարակն գետը գոյություն է ունեցել թունել՝ գետնուղի, ելք ու մուտքի, ջուր, սնունդ հայթայթելու համար»:

Գյավուրի բերդի տեղորոշման հարցում գրեթե նույն տեսակետն է հայտնել նաեւ Երվանդ Լալայանը. «Զարահունջից մոտ 6 կիլոմետր դեպի հարավ, նույն ճորի աջ կողմում բարձրանում են երեք առանձին, ահագին ժայռեր, որոնցից մեկի վրա կա մի հինավուրց ամրոց: Այժմ ոչ մի ճանապարհ չկա նրա գլուխը բարձրանալու, միայն հեռվից երեւում են բնականից թողնված պարիսպ եւ այրեր:

Ոմանք սրան Ղըզ-դալա են կոչում, ուրիշներն էլ՝ Գյավուր-դալա»:

Գյավուրի բերդի տեղորոշման հարցում նույն դիրքորոշումն են հայտնում «Գորիսի հանրագիտարանի» հեղինակներ Էդուարդ Զոհրաբյանը եւ Յանվետ Միրզոյանը. «Գյավուրկալա. ավերակ բերդ... Գորիսի շրջանում, Զարահունջ գյուղից 6 կմ հարավ-արեւելք, Ծակեր կոչված վայրում»:

Այդ տեսակետը, ի վերջո, հաստատում են «Յայաստանի եւ հարակից շրջանների բառարանի» հեղինակներ Թ. Յակոբյանը, Ստ. Մելիք-Բախշյանը, Յ. Բարսեղյանը:

Ահա՝ «Գյավուրկալա. ավերակ բերդ ՅՍՄՀ Գորիսի շրջանում, Զարահունջ գյուղից 4 կմ հարավ-արեւելք, Գորիս գետի բարձրադիր աջ ափին, Ծակեր կոչված վայրում: Պահպանված են կրապատ բուրգեր, ժայռափոր անցքեր»:

Կարծում ենք՝ այդ վկայությունները եւ մանավանդ քարահունջիների՝ սերնդեսերունդ փոխանցված հիշողությունը բավարար են հաստատելու, որ հենց դա է Գյավուրի բերդը:

Գյավուրի բերդի տեղորոշման հարցում, անշուշտ, կան տարակարծություններ:

Սերո սպարապետ Խանգաղյանը, օրինակ, կարծում է, որ մեր կողմից Գյավուրի բերդ կոչվող ամրոցը Բարգուշատի բերդն է, որը, սակայն, որեւէ քննադատության չի դիմանում: Բարգուշատի բերդի տեղի հետ կապված այնքան որոշակիություն կա, որ հարկ չենք համարում նույնիսկ քննարկել այդ վարկածը՝ հիմնազուրկ լինելու պատճառով:

Անհարկի ենք համարում քննարկել նաեւ տեսակետը, թե իբր Գյավուրի բերդն Աղրբեջանի երբեմնի Կուբաթլիի շրջանի Բախտիարյու գյուղի մոտ գտնվող (Որոտան գետի աջ բարձրադիր ափին) բերդն է, քանզի դա Բղենո բերդն է՝ Դաուֆու (ներկայումս՝ Դոդար, որ մտնում է Արցախի Յանրապետության Զաշաթաղի վարչական շրջանի մեջ) գյուղի մոտ գտնվող, ինչի մասին առիթ ենք ունեցել խոսք ասել վերջերս այնտեղ կատարած այցելությունից հետո:

◆ ◆ ◆

Գյավուրի բերդի շուրջ կա բանավիճային մեկ այլ խնդիր եւս:

«Յայաստանի եւ հարակից շրջանների բառարանի» հեղինակները ենթադրություն են հայտնում, որ Գյավուրի բերդը նույն Ձագեծորո կամ Յանբադա բերդն է՝ Սյունյաց աշխարհի Յաբանդ գավառի ամենախոշոր ամրոցը:

Ահա նրանց տեսակետը՝ «Գյավուրկալա... հավանաբար սա է եղել հին Ձագեծորի բերդը, քանի որ այն, ինչպես եւ Ձագեծորի բերդը, ընկած է պատմական Յաբանդ եւ Բաղք գավառների սահմանագլխին»:

Այդ տեսակետը բառացիորեն կրկնում են «Գորիսի հանրագիտարանի» հեղինակները:

Գյավուրի բերդ անվանումը, բնականաբար, չի օգտագործել Ստեփանոս պատմիչը:

Գյավուրի բերդի մասին հիշատակություն կա Ղեւոնդ Ալիշանի «Սիսակախում»՝ Գյավուր գալեսի տեսքով՝ առանց տեղը նշելու:

Դա նշանակում է, որ հնամենի բերդի նոր անունը՝ Գյավուր-դալա (Գյավուր գալեսի), շրջանառության մեջ է դրվել ուղ միջնադարում:

Ոչ ավելորդ անգամ հիշեցնենք՝ Գյավուրը՝ իսլամը դավանողների կողմից բոլոր այլադավաններին տրված արհամարհական անունն է, որ հիմնականում օգտագործվել է միջին դարերում:

Դա նշանակում է, որ Գյավուրի բերդն անմատչելի է եղել օտար նվաճողների համար:

Դա նշանակում է, որ Գյավուրի բերդը սկզբնապես ունեցել է այլ անվանում, որը, անտարակույս, պետք է փնտրել Սյունյաց աշխարհի խոշոր բերդերի անվանումների մեջ՝ փոխանցված Ստեփանոս Օրբելյան անգուգական պատմիչի կողմից:

Ծանոթանալով բերդանունների ցանկին՝ հանգում ենք հիմնավոր հետետության, որ Գյավուրի բերդը Ձագեծորի կամ Յանբադա բերդն է:

Տեսեք, թե ինչպես է բնութագրում Ձագեծորը բերդը Ստեփանոս Օրբելյանը. «...Յանբադա բերդը, որ Սիսակի նույն տոհմի Ձագ նահապետը շինեց մի գետի վրա եւ իր անունով ձորը կոչեց Ձագեծոր, բերդն էլ Ձագեծորը բերդ»:

Որքան նման է այս նկարագրությունը Գյավուրի բերդին:

Չէ՞ որ Ձագեծորը հենց Վարարակնի հովտին է՝ Ալկներից (Բռունից), ավելի ճիշտ՝ Ձագեծոր լեռան ստորոտից սկսած մինչեւ Դաուֆու (ներկայումս՝ Դոդար):

Չէ՞ որ Գյավուրի բերդի արեւելյան եւ հարավ-արեւելյան ստորոտը սկսում է հենց Վարարակն գետից, ասել է թե՛ բերդը գետի վրա է կառուցված:

Պատմիչի մեկ այլ բնութագրում եւս. «Իսկ այստեղ գտնվող ամրոցները, որ անհասանելի են մարդկանց մուտքին, եւ միայն տերը կարող է մատչելի դարձնել, հետեյալներն են...»:

Որքան է պատշաճում այս բնութագրումը Գյավուրի բերդին:

Այսօր էլ այդ ամրոցը՝ իր բազուկներով, անհասանելի է մարդկանց մուտքին:

Իհարկե, Ձագեծորում (Վարարակնի հովտում) կան այլ բերդերի հետքեր եւս. Օփավերի բերդը՝ Զարահունջից արեւելք, Բռունի մերձակայքի բերդը, Վերիշեն գյուղի արեւելյան հատվածում գտնվող բերդատեղին, Գորիս գյուղում՝ Լաստի խութին հենված բերդատեղին, Ծակածորի բերդը... Նշված բոլոր բերդերից եւ ոչ մեկը (հայցում ենք այդ վարկածների հեղինակների ներողամտությունը) չի համապատասխանում այն նկարագրումներին, որ ներկայացնում է Սյունյաց տան պատմիչը:

Եվ միայն Գյավուրի բերդն է, որ համապատասխանում է Ստեփանոս Օրբելյանի նկարագրությանը՝ եւ անմատչելիության, եւ դիրքի առումով:

Ի վերջո շատ բնական է, որ գավառի գլխավոր ամրոցը պիտի կառուցված լիներ գավառի հարավ-արեւելյան սկզբնամասում, որտեղից առավել շատ էր սպասվում օտարների մուտքը, այլապես հասկանալի չէր լինի նրա





Կաշտպանական նշանակությունը: ♦ ♦ ♦

Գյավուրի բերդը՝ Ձագեծորի կամ Յաբանդի բերդը...

Վերը նշված դիտարկումներով հանդերձ այս վարկածն ունի բավականին լուրջ հակառակորդներ:

«Դիվան հայ վիճակագրության» երկրորդ պրակի հեղինակ Սեդրակ Բարխուդարյանը գրում է. «Ներկա Գորիսի հարավից բարձրանում է Լաստ գագաթը, որի ապառաժների վրա կառուցված է եղել Սյունիքի նշանավոր բերդերից՝ Յաբանդի բերդը, որը հետագայում կոչվել է նաեւ Ձագեծորի բերդը»:

Ճանաչված հնագետը, սակայն, որեւէ ապացույց կամ հիմնավորում չի բերում՝ նման եզրակացության համար:

Չարմանք է հարուցում նաեւ իրողությունը, որ հնագետը, Գորիսում լինելով, տեղեկացված չի եղել տարածքի ամենախոշոր բերդի՝ Գյավուրի ամրոցի մասին:

Ձագեծոր բերդի՝ Լաստի գագաթի ապառաժների վրա գտնվելու տեսակետը պաշտպանում է Սերո Խանգադյանը՝ դարձյալ չվկայակոչելով որեւէ հիմնավորում:

«Հայկական սովետական հանրագիտարանը» (հատոր 6, էջ 686) տեղեկացնում է՝ «...Ձագեծորի ստույգ տեղը հայտնի չէ, ենթադրվում է, որ գտնվել է այժմյան Գորիսի շրջանի Վերիշեն գյուղի մոտակայքում»:

Այս կարծիքի հեղինակները նույնպես որեւէ հիմնավորում չեն բերում:

Ըստ «Սյունիքի պատմություն» գրքի թարգմանության, ներածության եւ ծանոթագրությունների հեղինակ Ա. Աբրահամյանի՝ «Հանքաղա կամ Յաբանդա (այլեւ՝ Ձագեծոր) բերդի տեղը ստույգ հայտնի չէ: Անունից երևում է, որ գտնվել է համանուն Յաբանդ գավառում (այժմյան Գորիսի շրջանում): Իսկ որոշակի տեղի մասին հայտնվել են այլեայլ կարծիքներ...»: Այդ առումով հեղինակը հիշում է հնագետ Ս. Բարխուդարյանի տեսակետը, որը քիչ առաջ ներկայացրինք ընթերցողին (Լաստ գագաթի ապառաժները):

«Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանի» հեղինակները, որքան էլ զարմանալի է, միեւնույն հարցի վերաբերյալ բառարանի տարբեր էջերում իրարամերձ կարծիքներ են հայտնում (նման շատ օրինակներ ունենք):

Այս դեպքում ես՝ նախ՝ ներկայացվում են բերդի տարբեր անունները՝ Ձագեծորի բերդ, Աբանդ, Խաբանդ, Յաբանդ, Յաբանդաբերդ, Յաբանդի բերդ, Յամբատաբերդ, Յանբանդ, Յանբադաբերդ, Ձագաբերդ, Ձագեծոր, Ձագեծոր բերդ եւ այլն: Բառարանի հեղինակները, մոռանալով, սակայն, նախորդ էջերում հայտնած տեսակետը, գրում են՝ Ձագեծորի բերդը «հավանաբար գտնվում էր այժմյան ՀԽՍՀ Գորիս քաղաքից հյուսիս, Վերիշեն գյուղի հանդամասում, Գորիս գետի հովտում: Ունանք էլ պատմական Ձագեծորի բերդը

տեղադրում են Գորիսի շրջանի Բռուն գյուղի տարածքում, նրանից մոտ 2կմ հյուսիս-արեւմուտք գտնվող Դալա-բերձ կոչված վայրում, որտեղ նշմարվում են մի հին բերդի մնացորդներ»:

Գորիսի պետական համալսարանի դասախոս Ժիրայր Միրումյանը «Սյունյաց երկրում» (N 10, 2011 թ.) նույնպես քննարկել է Ձագեծոր բերդի տեղադրության հարցը: Նա հերքում է Սեդրակ Բարխուդարյանի



Չրայր Աբրահամյան



արդեն իսկ հայտնի տեսակետը:

Չերքում է Ա. Ղարազոյցյանի տեսակետը, թե Ձագեծորի բերդը կարող էր գտնվել Ակներ (Բռուն) գյուղի տարածքում:

Ժիրայր Միրումյանի կարծիքով՝ «Ձագեծոր բերդի ամենահավանական տեղադրությունը կարող է լինել Վերիշենից 200-300 մ հյուսիս-արեւելք գտնվող Վերիշենից Վաղատուր տանող ճանապարհի վրա իշխող Դլը բերձ կոչվող բարձունքի գագաթին»:

Վերոգրյալ տեսակետները, սակայն, չեն հիմնավորվում գիտական ապացույցներով, ուստի եւ շարունակում ենք պնդել՝ Գյավուրի բերդը Ձագեծորի կամ Յաբանդի բերդն է, ասել է թե՛ Յաբանդ գավառի ամենախոշոր եւ անմատչելի ամրոցը, Սյունյաց աշխարհի ամենանշանավոր բերդերից մեկը: ♦ ♦ ♦

Շատ կարեւոր է Գյավուրի բերդի իշխող դիրքը. այնտեղից տեսանելի են Որոտանի կիրճի մի մեծ հատվածը, Վարարակնի հովիտը, Բղենո բերդի միջնաբերդը, Բղենո Նորավանքը, Թաս լեռնանցքից արեւելք գտնվող Երբեմնի Մազրա գյուղի կանգուն եկեղեցին...

Գյավուրի բերդը շրջապատված է եղել հայկական բազմաթիվ գյուղերով: Դրանց նախնական անունները դեռ պետք է ճշտել: Բայց ուշ միջնադարում դրանք արդեն ունեին նոր անուններ՝ Թափտուղաշեն, Կալեր, Խանում, Զարատակ, Մեծ կապ, Գյունեյ, Գյաուր դալա, Յագ...

Այդ գյուղատեղիներում, հատկապես Յագ գյուղատեղիում, մեծ դամբարանադաշտ է եղել՝ բացառիկ խաչքարերով, որոնք ոչնչացվել են Կոբաթիի իշխանությունների կողմից՝ տարածքի մեկտրոսման հետեւանքով:

Բերդի հարավ-արեւելյան ճյուղավորման ստորոտում գտնվող այդ վայրը հիմա վարելահող է:

Գյավուրի բերդը, սակայն, հզոր ամրոց չի եղել սուկ:

Պարզվում է՝ այն՝ մերձակա բնակավայրերով, բազում սրբություններ է ունեցել:

Դրանում համոզվեցինք, երբ ուսումնասիրեցինք բերդին մերձակա գերեզմանատների հետքերը:

Դրանում ավելի համոզվեցինք, երբ, մեր շրջայցի ավարտին ժամանեցինք Գյավուրի բերդի արեւելյան ստորոտ՝ Վարարակնի կիրճ, որտեղ Սուրեն Յարությունյանը (Զարահունջ գյուղից) 1990-ականներից սկսած հրաշալի մի անկյուն է ստեղծել:

«Սուրիկի լիճ» անվանյալ այդ վայրում տեսանք իսկական մի քարադարան՝ բազմաթիվ խաչքարերով եւ հնագիտական տարաբնույթ ցուցանմուշներով, որոնք (փրկելու նպատակով) հավաքել-բերել է բերդի մերձակայքից:

Վարարակնի կիրճի մերօրյա այդ «տիրակալը» նույնպես համոզում էր, որ դիմացի լեռնագոտին Գյավուրի բերդն է, որ Գյավուրի բերդը Ձագեծորի կամ Յաբանդի բերդն է... Ե...

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



Ռիտա Դավթյանի հոբելյանն է. շնորհավորում ենք

Սյունյաց աշխարհի ամեն քաղաք կամ գյուղ պարմական յուրաքանչյուր կոնկրետ հանգրվանում ունեցել եւ ունի իր երեւելիները, իր ընթացքի դրոշակակիրները:

Կապան քաղաքն էլ, այդ առումով, բացառություն չէ:

Մարզկենտրոնի նորագույն շրջանի վերջին երեք-չորս տասնամյակի պատմության մեջ ուրույն եւ նշանակալի դեր է ունեցել Ռիտա Արարատի Դավթյանը:

Դեռեւ 1970-ականների վերջին եւ 80-ականների սկզբին Կապանի շրջանի երիտասարդության ընտրյալ առաջնորդն էր, արժանապատիվ առաջատարը:

Յանրապետության քաղաքական ղեկավարությունն այդ տարիներին եւ շատ դեպքերում հենց նրա կերպարի միջոցով էր տեսնում-արժեւորում-հմաստավորում շրջանի երիտասարդության գործունեությունը: Ընդ որում՝ արժեւորում-հմաստավորում էր դրականորեն:

Դա այն սերունդն էր, որ ոտքի ելավ կորսված հայր պետականության վերականգնման, ինչպես եւ Արցախի ազատագրության համար:

Յետագայում Ռիտա Դավթյանը լծվել է մանկավարժությանը, ավելի ստույգ՝ մանկավարժության ամենադժվարին ու սրբասուրբ ոլորտին՝ ծակտագրի կամոք դժբախտացած երեխաների կրթության եւ դաստիարակության աստվածահաճո գործին:

Տարիներ շարունակ այդ երեխաներից յուրաքանչյուրի համար ծնող է եղել՝ իր գորովագութ պահվածքով, ստեղծագործ աշխատանքով նրանց հույս ու հավատ ներարկելով:

Յանուն այդ երեխաների էլ նա զոհաբերեց-ուշադրությունից դուրս թողեց իր անձնական-ընտանեկան կյանքի շատ-շատ հարցեր:

Յետադարձ հայացք ձգելով Ռիտա Դավթյանի անցած ճանապարհին, կարող ենք փաստել՝ նրա համար անսակարկելի արժեք է եղել ու կա Յայաստանի անկախ պետությունն ու պետականությունը, ինչպես եւ իր բնօրրան Կապանի արժանապատիվ ու բարգավաճ առօրյան:

Նրա վարքում անընդունելի են եղել օրինապահությունը, օրենքի ու պետական կարգի հանդեպ հարգանքը, հավատամքն ազգային-սյունիքյան արժեքներին:

Առանձնահատուկ ուշադրություն, հարգանք է ունեցել եւ ունի ընկերների, համաքաղաքացիների հանդեպ. ու մարդկային այդ որակները դիմացան փորձությունների քուրայով անցնող մեր օրերում:

Յաճեյի է նկատել, որ կյանքի յոթ տասնամյակը բոլորով Ռիտա Դավթյանն արժանապատիվ Սյունիքի ջատագուժներից է, մեր շաղկված ներկայում՝ աճող սերնդի համար յուրօրինակ կանթեղ դարձած ավագներից մեկը:

Այդ ամենի համար է, որ Նոր տարվա եւ Սուրբ ծննդի գեղեցիկ տոնին համընկած այս օրը ողջունում ենք մեր երկրամասի արժանավոր դատրեղից մեկին՝ Ռիտա Դավթյանին, շնորհավորում նրան՝ ծննդյան հոբելյանի առթիվ եւ մաղթում հաջողություններ անձնական կյանքում ու հանրային գործունեության ասպարեզում:

Ծնունդը շնորհավոր, հարգելի Ռիտա Դավթյան: ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, 01.01.2020թ.

Սերո Խանգադյանը և Արցախյան շարժումը

Երկրորդ բաց նամակը Բրեժնեվին Խանգադյանը հասցեագրել է 1977 թվականի հուլիսին: Նոր նամակի առիթը «Проблемы мира и социализма» ամսագրի 1977 թվականի թիվ 6 համարում հրատարակված մի հոդվածն էր, որում հերթական անգամ աղավաղվում էր Ղարաբաղի պատմությունը: 32 լեզվով տպագրվող էր աշխարհի 145 երկրներում տարածվող պարբերականի հրատարակումը ստիպում էր Խանգադյանին՝ կրկին դիմելու ԽՍՀՄ ղեկավարին՝ պահանջով: «Սերո միասնական հզոր պետության սահմաններում գտնվող զուտ հայկական մարզը, ավելի քան 80 տոկոս հայ բնակչությամբ, հայկական դպրոցներով, պետական հայերեն լեզվով պետք է գտնվի Խորհրդային Սոցիալիստական Հայաստանի կազմում»²²: ԽՍՀՄ առաջին դեմքը պարտավոր է լուծել մի հարց, որ «ավելի քան կես դար անարդարություն է մարմնավորում» եւ որի արդարացի լուծումը «կգնահատվի որպես ազգային քաղաքականության հաղթանակ»:

Խանգադյանը նույն ընթացքում նամակ է հղել նաեւ ԽՍՀՄ կենտրոնի բաժնի վարիչ Ե.Տյաժնիկովին եւ գրքում քաղաքներում ներքին նաեւ այդ նամակից: Նա հիշեցնում է, որ Ղարաբաղի խնդիրը գոյություն ունի 1921-1923 թվականներից, երբ հայկական մարզն ապօրինի մտցրին Արդեջանի կազմի մեջ: Նամակում խոսում է նաեւ Նախիջեանի մասին՝ որպես նույն անարդարության դրսեւորում: Ժամանակ է արդարանում ու սկզբունքայնությամբ նայելու ճշմարտության աչքերին եւ Ղարաբաղը վերադարձնել Հայկական ԽՍՀ-ին:

Խանգադյանը խստադատ մի նամակ էլ հղել է «Проблемы мира и социализма» ամսագրի խմբագրությանը՝ մասնավորապես նշելով. «Ձեր հրատարակած ռեպորտաժի շատ եզրակացություններ ու վկայություններ պարզապես հրեշավոր են: Դուք մի ամբողջ ժողովրդի ամենից սրբազան գագնուքներն եք վիրավորել»²³: Երկու նամակներն էլ անպատասխան են մնացել: Եվ քանի որ «Проблемы мира и социализма» ամսագիրը տպագրվում էր Չեխոսլովակիայի մայրաքաղաք Պրահայում, Խանգադյանը մի նամակ էլ հասցեագրում է այդ երկրի ղեկավար Գուստավ Յուստիկին, հորդորում արձագանքել հայ ժողովրդի արդար պահանջին եւ դատապարտել շրջանառվող կեղծիքը: «Համոզված եմ, որ շուտ թե ուշ, Ղարաբաղյան հարցը պետք է որոշվի: Չի կարելի հանդուրժել այն, որ Հայկական Ինքնավար Մարզը անջատված է իր մայր հայրենիքից»²⁴:

Բրեժնեվին հղած երկրորդ նամակը վիթխարի արձագանք ունեցավ աշխարհասփյուռ հայության շրջանում: Առաջինն այն տպագրեց սփյուռքի «Զարթոնք» թերթը (1977թ., հոկտեմբերի 20), հետո

աշխարհի գրեթե բոլոր հայկական թերթերը: Այն թարգմանվեց ու հրատարակվեց նաեւ այլ լեզուներով, հաղորդվեց հեռուստացույցով, ռադիոյով:

Նամակի առաջ բերած աղմուկից հետո Խանգադյանին իր մոտ է կանչել նաեւ Կարեն Դեմիրճյանը, պարզաբանումներ պահանջել: «Այսպես՝ մի ամսվա ընթացքում ութ անգամ ինձ կանչեցին Կենտկոմ»,- հիշում է Խանգադյանը²⁵: Նամակի առնչությամբ վավերագրության մեջ նա քաղաքներում էր անում նաեւ սփյուռքահայ մամուլի ոգեշունչ արձագանքներից: «Հայ ազգի արժանագույն զավակներից մեկի» սխրալից քայլին բանտից շտապել է գնահատական տալ նաեւ Գորգեն Յանիկյանը, որ, Խանգադյանի վկայությամբ, «մինչեւ իր հերոսական գործը կատարելը մեկ տարի առաջ եղել է իմ տանը (Նորքում)»: Խանգադյանի հանրահռչակված նամակին 1978 թվականին արձագանքել է նաեւ Բեյրութում Սիմոն Սիմոնյանի խմբագրությամբ լույս տեսնող «Սփյուռք» շաբաթաթերթը՝ «Ղարաբաղ եւ անոր պաշտպանները» վերտառությամբ հոդվածով, որին ամենայն հավանականությամբ Խանգադյանը ծանոթ չի եղել եւ չէր էլ կարող լինել, եթե հաշվի առնենք, որ ազատախոս «Սփյուռք»-ը բառիս բուն իմաստով մերժված էր Հայաստանում, որովհետեւ հանդգնել էր 1958 թվականից արդեն Ղարաբաղի հարցն արձարծել՝ դառնալով հիմնախնդրի բարձրաձայնման առաջամարտիկը ոչ միայն Սփյուռքի, այլեւ հայ մամուլի պատմության մեջ ընդհանրապես: Հոդվածի հեղինակ Լեոն Երկաթը, ողջունելով հայրենի գրողին համահայկական շահեր հետապնդող բաց նամակի համար, զուգահեռ մեղադրում է արտասահմանի հայ քաղաքական կուսակցություններին, որոնք քար լռություն են պահպանում հայկական հողերի հարցի վերաբերյալ: Վավերագրության մեջ Սերո Խանգադյանի արտահայտած այն համոզմունքը, թե «միջազգային մասշտաբով Հայ Դատը առաջ է մղվում նաեւ Բրեժնեվին գրածս իմ նամակ-պահանջի շնորհիվ», փոքր-ինչ ինքնագովություն է, որովհետեւ հարցին միջազգային հնչեղություն տվեց «Սփյուռք» պարբերականը՝ ի դեմս խմբագրապետ Սիմոն Սիմոնյանի, որ 1960 թվականին առաջին բաց նամակը հասցեագրեց Արդեջանի ղեկավարին՝ հրատարակելով հենց «Սփյուռք»-ում:

Վավերապատումի երկրորդ ասքը՝ վերնագրված «Մարտը տալիս է ծնծադիկ», գրեթե եղեռնապատում է: Խանգադյանը նկարագրում է Սումգայիթյան դեպքերը, փաստավավերագրական ճշգրտությամբ ներկայացնում Սումգայիթում հայերի նկատմամբ կատարված բռնությունները՝ հենվելով ականատեսների վկայությունների, փաստական հարուստ նյութի վրա: «Սումգայիթի հայերի կոտորածը նման է 1915-ի

Կ. Պոլսի հայերի նախնական ջարդին», - դառնորեն եզրակացնում է Խանգադյանը եւ պատում առ պատում բացում այդ զարհուրելի օրերի երակները: «Սեր ծնծադիկները, սակայն, սպիտակ չեն, այլ կարմիր՝ հայի արյամբ ներկված»:

Ամփոփենք, Խանգադյանի «Ղարաբաղը կրակների մեջ» գեղարվեստական վավերագրության մեջ ներկայացված է Ղարաբաղյան շարժման ամբողջ ընթացքը՝ հիմնականում օրագրային ու փաստագրական եղանակով, ինչը հնարավորություն է տալիս բոլոր նրբերանգներով պատկերացնելու ժամանակին հայ ժողովրդի առջեւ ծառայած խնդիրները, Արցախյան ազատամարտի պատմաքաղաքական նախադրյալները, ժողովրդի հերոսական ոգու թռիչքը, միահավաքվելու, մեկտեղվելու գործընդերքը՝ հանուն Արցախի գոյահաստատման: Գրող-վավերագրի գրչի տակ հնտորեն ու բազմակողմանիորեն, հաճախ պատմաքննական լուսաբանման են ենթարկվել Արցախյան համագաղափար շարժման ծավալման բարդ ու ոչ միանշանակ գործընթացները, օբյեկտիվորեն երեանկվել հիմնահարցի հետագա զարգացումներն ու հնարավոր բոլոր ելելները, որոնց կենտրոնում հենց ինքն է՝ Արցախյան շարժման նախաձեռնիչներից ու դրոշակակիրներից մեկը, ազատագրության դարավոր երազի օրհներգուն: Խանգադյանը հաճախ պատմագետի հայացքով է փորձում բացահայտել Ղարաբաղյան հարցի առաջացման խորքային պատճառահետևանքային կապերը, թե ինչու՞ եւ ինչպե՞ս այն դուրս մղվեց դիվանագիտական ակտիվ գործառնությունների քաղաքական դաշտից՝ պարզապես տեղափոխվելով խորհրդային հանրապետությունների շահադիտական հարաբերությունների ոլորտ: Գրողն անընդհատ վերակրչում է պատմության դասերը, որովհետեւ Արցախյան հիմնախնդրին վիճակված էր առերեսվել պատմության դառը փորձի հետ:

- Ծանոթագրություն**
1. Խանգադյան Ս., Ղարաբաղը կրակների մեջ, Ե., 2006, էջ 3:
 2. ՀՀ ԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 152, թ. 8, տպագիր, բնագիր:
 3. ՀՀ ԱԱ, ֆ. 798, ց. 1, գ. 1009, թ. 161, տպագիր, բնագիր:
 4. ՀՀ ԱԱ, ֆ. 798, ց. 1, գ. 1013, թ. 24-26, տպագիր, պատճեն:
 5. Նույն տեղում, էջ 16:
 6. Նույն տեղում, էջ 4:
 7. Նույն տեղում, էջ 4:
 8. Նույն տեղում, էջ 4:
 9. Նույն տեղում, էջ 6:
 10. Նույն տեղում, էջ 7:
 11. Նույն տեղում, էջ 7:
 12. Նույն տեղում, էջ 8:
 13. Նույն տեղում, էջ 109:
 14. Նույն տեղում, էջ 29:
 15. Նույն տեղում, էջ 66:
 16. Նույն տեղում, էջ 67:
 17. Նույն տեղում, էջ 60:
 18. Նույն տեղում, էջ 145:
 19. Նույն տեղում, էջ 165:
 20. Նույն տեղում, էջ 37:
 21. Նույն տեղում, էջ 39:
 22. Նույն տեղում, էջ 42:
 23. Նույն տեղում, էջ 44:
 24. Նույն տեղում, էջ 45:
 25. Նույն տեղում, էջ 46:

Ո՞ր հարցերում էին համագործակցում Արթուր Վանեցյանը և Սյունիքի Վահե Ա. Հակոբյան մարզպետը

2020 թ. հունվարի 13-ին factor.am-ը գրուցել է «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀՀ ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանի հետ:

Դանիել Իոաննիսյանը մասնավորապես նշել է՝ «Ո՞վ էր Արթուր Վանեցյանը, ԱԱԾ-ի երեսնի վարչության պետի տեղակալ, հեղափոխությունը զուտ պատահականությունների բերումով իրեն տվեց հնարավորություն, բարձր պաշտոն, Նիկոլ Փաշինյանն իրեն տվեց գեներալի ուսադիրներ, հանրային

վարներին եւ հատկապես իրավապահ մարմինների պատասխանատուներին, եւ դրանցից ոչ մեկը քննություն առարկա չդարձավ:

Ընդ որում՝ հրատարակումներից եւ դիմումներից մի քանիսն այն մասին էր, որ Սյունիքում, մարզպետարանի կողմից, կատարվում են պետական պաշտոնյաների եւ լրագրողների հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումներ:

«Սյունյաց երկրի» դեմ կատարվեցին բազմաթիվ քրեական հանցագործություններ՝ սայարկա գողա-



հայտնիություն: Կարող է ինքը մեծ արժանիքներ ունենալ, որ այդ արժանիքներով հասավ դրան. չէ, դա պատահականություն էր...»:

Դանիել Իոաննիսյանն այդ հարցազրույցում ուշագրավ մի արտահայտություն է կատարել Սյունիքին առնչվող. «Վանեցյանն ընկերական հարաբերություններ ունի Սաղաթեյանների, Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանի հետ, եւ իրենք ինչ-որ չափով համագործակցում էին»:

Առաջին հայացքից սովորական այս արտահայտությունը մեծ արձագանք է գտել Սյունիքում:

Մարդկանց հետաքրքրում է պարզագույն մի հարցի պատասխան՝ ինչ գործերով էին համագործակցում Արթուր Վանեցյանը եւ Սյունիքի Վահե Ա. Հակոբյան մարզպետը:

Հանքարդյունաբերության ոլորտում նրանց համագործակցության մասին քանիցս զրվել է:

Բայց... մի քանի տասնյակ լրագրային հոդվածներ հրատարակվեցին Վահեի սյունիքյան կամայականությունների մասին, մի քանի դիմում ուղղվեցին երկրի ղեկա-

ցողների շալկայի ձեռքերով: Հարուցված երեք քրեական գործը, առաջն լուրջ հիմնավորումների, կասեցվեց:

Կասեցվեց նույնիսկ թերթի խմբագրության մեքենայի հրկիզումը, որի վերաբերյալ տեսանյութ կա քրեական գործի նյութերում. թե ինչպես են մեքենան հրկիզում:

Արդյոք վերոնշյալ համագործակցությունը նշված գործերին նույնպես առնչվում էր:

Այնուհետեւ՝ Արթուր Վանեցյանին ԱԱԾ ղեկավար նշանակելուց մի քանի օր անց՝ մեկ-երկու շաբաթվա ընթացքում, Քաջարան ներխուժած գաղութարարները տա-քա քաղաքացիական հայցով դիմեցին դատարան՝ ընդդեմ «Սյունյաց երկրի»:

Արդյոք վերոնշյալ համագործակցությունն իր մեջ ընդգրկում էր նաեւ այդ օպերացիան:

Մի հարց եւս ոչ պակաս հետաքրքրում է Սյունիքին՝ մինչեւ էրբ են պետական պաշտոններում մնալու Վահե Ա. Հակոբյանի կողմից նշանակված եւ նրա կողմից ղեկավարվող անձինք:

«Սյունյաց երկիր»

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻԶ
«ՅՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
 ՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍԻՍՏԱՆԱՅԻՆՈՒԹՅԱՒ ԸՎԿԵՐՈՒԹՅՈՒՆ
 Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵՐ ԱՆԷՍՅԱՆՆ
 Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
 Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47է
 էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
 էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

«ԳՈՎԱԶԳ - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

© նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տաքսամակը՝ 1100, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 16.01.2020թ.:

Հայրաբարություն
 «Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում պահանջվում են բարձրագույն կրթությամբ հետեւյալ առարկաների դասավանդման մասնագետներ՝

1. Ֆիզիկա	2. Քիմիա
3. Կենսաբանություն	4. Աշխարհագրություն
5. Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովում	
6. Հայոց լեզու եւ հայ գրականություն	

Տեղեկությունների համար զանգահարել 077-52-32-90 հեռախոսահամարով կամ այցելել «Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ, հասցե ք. Քաջարան, Խանջյան 5:

Կորել է Գորիսի պետական համալսարանի 2009 թ. շրջանավարտ Արմեն Սլավիկի Աղասյանի AB N 080294 դիպլոմը համարել անվավեր:

Կորել է Սեւակ Սամվելի Անդրյանին պատկանող N 507992MT3-80(D-240) մակնիշի անիվավոր տրակտորի 31-04AX պետհամարանիշը համարել անվավեր: